MUSEUM
EDUCATION
CENTER

Ալվարդ Գրիգորյան
Աստղիկ Մարաբյան

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ



Թանգարանային կրթության կենտրոն

Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիա

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

ուսումնամեթոդական ձեռնարկ

Ալվարդ Գրիգորյան

Աստղիկ Մարաբյան

MEC MUSEUM EDUCATION CENTER

vhs DVV International

BMZ Federal Ministry for Economic Cooperation and Development

ՀՏԴ 069.1(07)
ԳՄԴ 79.1 ց7

Կ 839

Հրատարակության է երաշխավորվել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մշակույթի ֆակուլտետի խորհրդի կողմից:

Կրթությունը թանգարանում: Ուսումնամեթոդական ձեռնարկ:
Կ 839 Կազմեցին՝ Ա. Ֆ. Գրիգորյան, Ա. Ս. Մարաբյան
Խմբագիր՝ Հ. Վ. Պիկիչյան: Եր., Էդիտ Պրինտ, 2016, 84 էջ:

«Կրթությունը թանգարանում» ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է ՀՀ թանգարանների աշխատակիցների համար: Կարող է օգտակար լինել նաև մասնագիտական բուհերի ուսանողների և մանկավարժների համար:

ՀՏԴ 069.1(07)
ԳՄԴ 79.1 ց7

ISBN 978-9939-75-032-3

Գրքի տպագրությունը ֆինանսավորվել է Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության (ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալ) կողմից՝ Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության միջոցներից:

Հրատարակությունը վաճառքի ենթակա չէ և կոմերցիոն կամ շահույթի նպատակ չի հետապնդում:

Գրքում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել հրատարակչի կարծիքների հետ:

© Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիա, 2016
© 2016 DVV International
© Ա.Ֆ. Գրիգորյան, Ա.Ս. Մարաբյան, 2016

Museum Education Center | Assosiation of Museum Workers and Friends

EDUCATION IN MUSEUMS

Methodological Handbook

Alvard Grigoryan

Astghik Marabyan

MEC MUSEUM EDUCATION CENTER

vhs DVV International

BMZ Federal Ministry for Economic Cooperation and Development

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

8 Նախաբանի փոխարեն

10 Թանգարանի կրթական դերը. պատմական ակնարկ

14 Կրթական ծրագրերի նախապատրաստումն ու իրականացումը

24 Դպրոցականների համար իրականացվող նախագծեր

38 Ուսուցիչը՝ թանգարանում

45 Ուսուցիչ – թանգարան համագործակցությունը Գերմանիայում եվ ԱՄՆ-ում

51 Մեծահասակների համար իրականացվող նախագծեր

65 Վերջաբանի փոխարեն

67 Հավելված

77 Առաջարկվող գրականության ցանկ



Հայաստանի ազգային պատկերասրահ

Ավելի քան տասնամյա համագործակցության ընթացքում Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիան, Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ) Հայաստանի ազգային կոմիտեն և Գերմանիայի բարձրագույն դպրոցների ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալ հայաստանյան մասնաճյուղը բազմաթիվ հետաքրքիր և արդյունավետ նախագծեր են իրականացրել՝ միտված Հայաստանում թանգարանային մշակույթի զարգացմանն ու մասնագիտական կադրերի վերապատրաստմանը: Հատկապես առաջնային են համարվել ՀՀ մարզային թանգարանների զարգացմանն ուղղված ծրագրերը:

2014 թվականի ակնառու նախագծերից էր Գերմանիայի բարձրագույն դպրոցների հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ՝ Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի շրջանակներում ստեղծված Թանգարանային կրթության կենտրոնը:

Արժևորելով հասարակության բոլոր տարիքային և սոցիալական խմբերի շարունակական կրթությանը նպաս-

տող բազմաբնույթ և ինքնատիպ ծրագրեր իրականացնելու թանգարանների ներուժը՝ Թանգարանային կրթության կենտրոնը ՀՀ թանգարաններում կարիքների գնահատման հարցախույզ իրականացրեց: Ստացված տվյալների վերլուծությունից ակնհայտ դարձավ, որ թանգարանային կրթական ծրագրերի խթանման համար օգտակար կարող են լինել համապատասխան ուսումնական ձեռնարկի ստեղծումն ու դրա հիման վրա դասընթաց-վարժանքների կազմակերպումը:

Կրթական ծրագրերի ասպարեզում մեծ փորձ ունեցող ասոցիացիայի անդամներ Ալվարդ Գրիգորյանի (Խաչատուր Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության թանգարանի տնօրեն) և Աստղիկ Մարաբյանի (Գաֆէսճեան արվեստի կենտրոնի հանրային ծրագրերի գծով փոխտնօրեն) կազմած «Կրթությունը թանգարանում» ուսումնական ձեռնարկը նախատեսված է ՀՀ թանգարանների աշխատակիցների համար: Այն կարող է օգտակար լինել նաև մասնագիտական բուհերի ուսանողների և մանկավարժների համար:

Գրքում հնարավորինս հակիրճ և համակողմանի ներկայացվում են թանգարանային կրթական ծրագրերի նպատակները, գործառույթները, տիպաբանությունը, թիրախ խմբերը, ստեղծման և իրականացման գործընթացները: Անդրադարձ է կատարվում նաև արտերկրում և Հայաստանի թանգարաններում իրականացվող լավագույն ծրագրերին, արդյունքների գնահատման սկզբունքներին ու մեխանիզմներին:

Հոփսիմե Պիկիչյան

Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի նախագահ



Արամ Խաչատրյանի
տուն-թանգարան

ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալը Գերմանիայի Մեծահասակների կրթության ասոցիացիայի Միջազգային համագործակցության ինստիտուտն է: Որպես մեծահասակների կրթության առաջատար կազմակերպություն, ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալը շուրջ 45 տարի շարունակ օժանդակում է մեծահասակների կրթության և ցկյանս ուսումնառության զարգացմանը աշխարհի տարբեր երկրներում՝ տարբեր ոլորտներում ստեղծելով և զարգացնելով երիտասարդների ու մեծահասակների շարունակական կրթությանը նպաստող կենսունակ կառույցներ:

2009 թվականից ի վեր ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալի հայաստանյան մասնաճյուղը Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի հետ համատեղ աշխատում է Հայաստանի մի շարք թանգարանների կրթական ծրագրեր մշակելու և իրականացնելու կարողությունները զարգացնելու ուղղությամբ: Մեր առաջին շահառուները ՀՀ Շիրակի և Լոռու մարզի թվով տաս թանգարաններ էին, որոնց համար կազմակերպվել են դասընթացներ, ինչպես

նաև տրամադրվել են դրամաշնորհներ՝ կրթական ծրագրեր իրականացնելու նպատակով:

2014 թվականին ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալը, Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիան և Արամ Խաչատրյանի տուն-թանգարանը ստորագրեցին հուշագիր՝ Թանգարանային կրթության կենտրոն բացելու վերաբերյալ: Նույն թվականի դեկտեմբեր ամսին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տարածքում բացվեց Թանգարանային կրթության կենտրոնը, որի նպատակը Հայաստանի թանգարաններում կրթական ծրագրերի զարգացմանը նպաստելն է: Այս համագործակցության շրջանակներում արդեն իսկ հայերեն թարգմանվել և հրատարակվել է «Շարունակական կրթությունը թանգարաններում» եվրոպական ձեռնարկը, որը բաժանվել է թանգարաններին:

Սույն ձեռնարկը թանգարանային կրթության զարգացմանն ուղղված մեր երկրորդ հրատարակությունն է, որը, հույս ունենք, կդառնա Հայաստանի թանգարաններում կրթական ծրագրերի մշակմամբ և իրականացմամբ զբաղվող մասնագետների սեղանի գիրքը՝ նպաստելով, որ մեր թանգարանները հետաքրքիր ու բազմապիսի կրթական ծրագրեր առաջարկեն իրենց այցելուներին: Հուսով ենք, որ այն կօգնի գրագետ կազմել թանգարանի կրթական առաջարկը՝ ելնելով թանգարանի բնույթից, այցելուների սեռատարիքային, կրթական և այլ առանձնահատկություններից:

Լուսինե Խառատյան
ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալ կազմակերպության
Հայաստանի գրասենյակի փնօրեն



ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

«Վանաձորի քաղաքային համայնքի Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈԱԿ

Վերջին տարիներին Հայաստանում թանգարանային գործունեության ծավալումը, միջազգային թանգարանային նորագույն փորձի կիրառումը և, մասնավորապես, կրթական ծրագրերի զարգացումը ձևավորեցին ոլորտի արդի համայնապատկերը: Վերահաստատվեց թանգարանի դերը՝ որպես կրթական հարուստ կենտրոն, և թանգարանային կրթության առավել համակարգված ու ինստիտուցիոնալ զարգացմանը նպաստելու գործում կարևորվեց հայալեզու մասնագիտական ձեռնարկի ստեղծման անհրաժեշտությունը:

Ներկայացվող ձեռնարկը միտված է աջակցելու հայաստանյան թանգարաններում առավել ուղղորդված կրթական գործունեության զարգացմանը: Այդ համատեքստում թանգարանային կրթությունը ներկայացվում է որպես թանգարանի գործունեության ինքնուրույն և հիմնական ոլորտ, հակիրճ նկարագրվում են թանգարանային կրթության նախադրյալները, զարգացման ընթացքն ու առանձնահատկությունները:

Ձեռնարկում ընդգրկված թեմաներից առաջինը նվիրված է թանգարանում կրթական գործունեության ձևավորման և կայացման պատմական նախադրյալներին: Ապա քննարկվում են կրթական ծրագրերի նախապատրաստման, մշակման և իրականացման սկզբունքները: Թանգարան և դպրոց թեման անդրադառնում է կարևորագույն թիրախային լսարանի՝ դպրոցի հետ համագործակցության առանձնահատկություններին՝ բնութագրելով տարբեր տարիքի աշակերտների հետ աշխատանքի կազմակերպման, ինչպես նաև ուսուցիչ-թանգարան փոխգործունեության հիմունքները: Փորձի փոխանակման նկատառումներով հակիրճ նկարագրվում են նաև արևմտյան թանգարաններում իրականացված հաջողված կրթական ծրագրերից մի քանիսը: Թանգարանը որպես շարունակական և այլընտրանքային կրթության ու ժամանցի ինքնատիպ վայր է, ներկայացվում մեծահասակների հետ աշխատանքների կազմակերպմանը նվիրված բաժնում:

Ձեռնարկում ներկայացվում է նաև Հայաստանի թանգարաններում իրականացվող կրթական գործունեության ընդհանուր պատկերը, որին ի հավելումն՝ կազմվել են թանգարանային կրթական միջոցառումների մշակման գործնական հարացույցները, ներկայացվել թանգարանների կրթական ծրագրերի ընտրանին՝ ուսումնասիրողներին հնարավորություն տալով ծանոթանալու հայաստանյան թանգարանների լավագույն կրթական ծրագրերին:

Առաջարկվող գրականության ցանկում ներառվել են նաև թանգարանային խոշոր կրթական հաստատությունների և նախաձեռնությունների վերաբերյալ օգտակար հղումներ:



ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԴԵՐԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան

Թանգարանը շահույթ չհետապնդող հաստատություն է՝ կոչված ծառայելու հանրությանն ու նրա զարգացմանը, բաց է հասարակության համար: Այն ձեռք է բերում, պահպանում, հետազոտում և ցուցադրում է մարդկության և շրջակա միջավայրի նյութական և ոչ նյութական ժառանգությունը՝ կրթության, ուսումնասիրության և ժամանցի կազմակերպման նպատակներով:

Թանգարանների Միջազգային Խորհուրդ/ICOM

Թանգարանները հանրային ծառայությանն ու կրթությանը կոչված հաստատություններ են, որոնք առաջարկում են բացահայտում, ուսումնասիրություն, քննադատական մտածողություն, զննում և երկխոսություն:

Ամերիկյան Թանգարանների Միություն/AAM, 1992

Մասնագիտական գրականությունից հայտնի է, որ ժամանակակից հանրային թանգարաններն ի սկզբանե ստեղծվել են որպես կրթական կառույցներ: Դրանք խարսխվել են 18-րդ դարի լուսավորականության դարաշրջանի գաղափարախոսության հիման վրա, որն ուսման հավասար հնա-

լավորություններ էր սահմանում հասարակության բոլոր խավերի համար: Թանգարանը հանդես էր գալիս որպես մարդկության հավաքական հիշողության կրող և հանրության լայն զանգվածներին գիտելիք հաղորդող հարուստ կենտրոն: Այստեղ ցուցադրվող նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգությունը ներունակ էր փոխանցել անցյալի փորձը՝ կրթական լայն հնարավորություններ ընձեռելով բոլոր այցելուներին:

«Թանգարան» հասկացությունը գործառության մեջ է մտել մոտ 2.5 հազար տարի առաջ, սակայն մեր օրերում դրա իմաստն արմատապես փոխվել է: Եթե հին հույները «մուսեոն» (հին հունարեն՝ Μουσεῖον Mouseion) ասկով հասկանում էին Մուսաների տաճար (այդպես էին անվանում այն վայրը, որ հավաքվում էին գրականության, գիտության և արվեստի հետ շփվելու, հաղորդակցվելու համար), ապա միջնադարում այդ հասկացությունը, ինչպես նաև դրա հետ կապված մշակութային ենթատեքստը, դուրս մղվեց կիրառումից: Վերածնունդի դարաշրջանը երկրորդ կյանք շնորհեց Մուսեոնին՝ միաժամանակ նոր իմաստ հաղորդելով: Ըստ այդմ՝ թանգարան սկսեցին անվանել անշրիկ արվեստի, իսկ ավելի ուշ՝ բնության հազվագյուտ և զարմանահրաշ առարկաների հավաքածուները:

Ժամանակակից թանգարանների նախատիպերի մասին վկայությունները մեզ են հասել դեռևս 16 րդ դ. կեսերից: Առաջին օրինակներից է մոտ 1599թ. Նեյպլի բնության պատմության կաբինետը: Նմանատիպ կաբինետները կամ հազվագյուտ իրերի հավաքածուները, որոնք պատկանում էին եվրոպական խոշոր արիստոկրատներին և կայսերական ընտանիքներին, ընդգրկում էին բնության, աշխարհագրության հազվագյուտ իրեր, կրոնական և պատմական մասունքներ, արվեստի գործեր, որոնք նոր գիտելիքի և ուսումնասիրությունների անսպառ աղբյուր էին:

Հենց այդ ժամանակ մանկավարժ-հումանիստ Յան Ամոս Կոմենսկու «Orbis Sensulium Hictus» (1658) աշխատությունում այդպիսի հավաքածուները կարևորվեցին նաև կրթական առումով: Ընդունելով իմացության 3 սկզբնաղբյուր՝ զգայություն, բանականություն և հավատ՝ Յ.Ա.Կոմենսկին աշխարհաճանաչողության և ուսուցման ընթացքում առաջնակարգ նշանակություն էր տալիս նաև զգայական ընկալումներին և գնահատությանը՝ «Թանգարան» եզրն օգտագործելով որպես գիտնականի կաբինետ, որի ամբողջ պարունակությունը միտված էր իմացության գործընթացին: Հետագայում այդպիսի կաբինետները կոչվեցին Կունստկամերա: Հազվագյուտ հավաքածուներով հայտնի էին Պրահայի, Միունխենի, Դրեզդենի և 1718թ. Պետրոս Մեծի հրամանագրով հիմնած Սանկտ-Պետերբուրգի Կունստկամերաները: Դրանք շեշտում էին տվյալ միապետի հզորությունը՝ միաժամանակ նպաստելով բնակչության լայն զանգվածների կենսամակարդակի բարձրացմանը: Ավելի ուշ, նման մասնավոր հավաքածուների հիման վրա, ձևավորվեցին ժամանակակից թանգարանները:

Ու թեև առաջին հանրային թանգարաններն, իրենց խորքային առաքելությամբ, կրթական կառույցներ էին՝ միտված գիտելիքի ազատ տարածմանը և լայն զանգվածների կրթությանը, այդուհանդերձ դրանք հասանելի էին հանրության սահմանափակ շերտերին, քանզի իրացակայում էր կանոնակարգված կրթական գործունեությունը: 19-րդ դ. վերջին ընթացող առաջադեմ սոցիալ-քաղաքական շարժումները, ազգային պետությունների ձևավորումը,

քաղաքային բնակչության աճը, գիտության և արդյունաբերության զարգացումը նոր նախադրյալներ ստեղծեցին հասարակության սոցիալական և կրթական բարեփոխումների համար: Այդ համատեքստում նորովի էր կարևորվում թանգարանների կրթական դերը՝ նպաստելով ուղղորդված կրթական ծրագրերի կազմակերպմանն ու իրականացմանը: Աշակերտների կրթությանը նպաստող համատեղ աշխատանքներ կազմակերպելու նպատակով մի շարք թանգարաններում ստեղծվեցին ուսուցիչների հետ համագործակցության ծրագրեր: Այս առումով ուսանելի էր Անգլիայի Հարավ-Կենսինգտոնյան թանգարանի աշխատանքը դպրոցականների հետ, քանի որ այն ի սկզբանե ստեղծվել էր բնակչության բոլոր շերտերի գեղարվեստական կրթության և արվեստաբանական գիտելիքների զարգացման նպատակով: Այդ շրջանում Գերմանիայում ևս ակտիվորեն մշակվում էին թանգարանի միջոցով աշակերտներին կրթելու և դաստիարակելու հարցերը: Համբուրգի պատկերասրահի տնօրեն Ա. Լիխտվարկն առաջիններից էր, որ ձևակերպեց թանգարանի կրթական նշանակության գաղափարն ու մշակեց երեխաների համար արվեստի դասավանդման նոր մեթոդ՝ կիրառելով «թանգարանային երկխոսություն» եզրը: 1903թ. կազմակերպված «Թանգարանները որպես կրթական և դաստիարակչական հիմնարկություններ» թեմայով գիտաժողովում նա առաջադրեց այն գաղափարը, որ ի շարս համալսարանների և ակադեմիաների, «19-րդ դարն ավելացրեց մի նոր բարձրագույն կրթադաստիարակչական հաստատություն՝ թանգարանը»: Ա. Լիխտվարկի համոզմամբ՝ դա ժողովրդավարական գիտակցության արտահայտություն է: Գիտաժողովի որոշմամբ՝ 1905թ.-ից սկսեց հրատարակվել «Museumkunde» (Թանգարանային գործ) թանգարանագիտական հանդեսը, որտեղ տպագրում էին Գերմանիայում կրթական հիմնախնդիրներին նվիրված հոդվածներ:

Կրթության ոլորտում մեծ ներդրում են ունեցել նաև ամերիկյան թանգարանները: 1870թ. Նյու Յորքի խոշորագույն թանգարաններից մեկի՝ Մետրոպոլիտենի գործունեությունը միտված էր գեղեցիկ արվեստների ուսումնասիրմանն ու տարածմանը: ԱՄՆ-ի թանգարաններում այցելուների տարբեր խմբերի հետ իրականացված աշխատանքը հաստատեց, որ «Թանգարանը երեխաների համար պետք է ստեղծի կրթության, իսկ մեծերի համար՝ առողջ հանգստի ու գիտելիքի կուտակման պայմաններ: Այն պետք է դառնա պահոց, որից կկարողանան գիտելիքներ քաղել ուսանողները, և նկարիչների համար վերածվի ոգեշնչման աղբյուրի: Թանգարանի ազդեցությունը պետք է զգացվի անգամ տանը և արտացոլվի հասարակության բոլոր անդամների վրա»: Ըստ այդմ, 1924թ. ստեղծվեցին տարբեր ծրագրեր՝ հասարակության բոլոր շերտերի համար.

1. հանգստի և ժամանցի,
2. գիտելիքների մակարդակը բարձրացնելու,
3. գիտակներին օգնելու,
4. երեխաների բարօրության համար:

ԱՄՆ-ի թանգարաններն արդյունավետ համագործակցում էին նաև համայնքի այլ կրթօջախների հետ, որի շնորհիվ ստեղծվեց թանգարանային կրթության տեսական ու գործնական հիմունքների ու խնդիրների հաստատուն համակարգ:

19-րդ դարավերջը և 20-րդ դարասկիզբը նշանավորվեցին թանգարանաշինության թե՛ ֆիզիկական և թե՛ գիտահետազոտական նոր վերելքով, որը հաճախ անվանվում է «Թանգարանային շրջան» /Museum Period/: Թանգարանային ոլորտում կրթության և ուսումնառության նոր տեսությունների ի հայտ գալն առաջադրեց նոր սահմանումներ և դերաբաշխումներ՝ նպաստելով կրթական նոր աշխատաձևերի և պրակտիկաների ու համապատասխան մասնագիտական աշխատախմբի ձևավորմանը:

Լոուրենս Վեյլ Կոլեմանի 1927թ. «Ձեռնարկ փոքր թանգարանների համար» գրքում առաջին անգամ կիրառվում է ***Թանգարանային կրթագետ/Museum Educator*** *եզրը:*

Այլ կրթական հաստատություններին զուգահեռ թանգարանն ընկալվում էր իբրև կարևորագույն կենտրոն, որն ի զորու է բարեփոխելու ժամանակակից կյանքը: Այս շրջանում է ծավալվում հանրային դպրոցների և հասարակության տարբեր շերտերի հետ կարգաբերված համագործակցությունը: Մեր օրերում սովորական դարձած կրթական ձևերից ու եղանակներից շատերը (դիդակտիկ նյութեր, դասախոսություններ, հանրային բազմապիսի միջոցառումներ) ծնունդ են առել շուրջ հարյուր տարի առաջ: Թանգարանային հա-մադրողների (կուրատոր) և տնօրենների հետ միասին կարևոր դերակատարում են ստանում թանգարանային կրթության մասնագետները, որոնց առաքելությունը թանգարանի կրթական-սոցիալական դերի իրականացումն է: Ըստ այդմ՝ կրթական գործառույթը թանգարանի ինքնուրույն, ինստիտուցիոնալ գործառույթն է: Այսօր աշխարհի շատ խոշոր թանգարաններ կարևորագույն գիտահետազոտական և կրթական կենտրոններ են, որոնք հասարակության տարբեր սոցիալական և տարիքային խմբերի համար բազմապիսի կրթական ծրագրեր են առաջարկում: Թանգարանը նաև սոցիալ-մշակութային համակարգային փոփոխություններ իրականացնելու կարևորագույն սոցիալական հարթակ է, իսկ թանգարանային կրթության բազմաթիվ եղանակներն այն հենքն են, որի միջոցով հնարավոր է կյանքի կոչել այդ փոփոխությունները:



ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Գաֆէսճեան արվեստի կենտրոն

ԻԿՕՄ-ի հրապարակած «Թանգարանագիտության հիմնական հասկացությունները» բացատրագրքում թանգարանային կրթությունը սահմանվում է իբրև արժեքների, հասկացությունների, գիտելիքների և պրակտիկաների ամրողջություն, որը նպատակ ունի ապահովել այցելուի զարգացումը՝ որպես մանկավարժական մեթոդներով պայմանավորված մշակութահեն կրթական գործընթաց, ինչպես նաև՝ նոր գիտելիքների ձեռքբերումը և կատարելագործումը:

Թանգարանային կրթությունը թանգարանի գիտական ներուժի և այցելուի ինտելեկտուալ-զգայական հաղորդակցումն է որպես կրթական փորձ, որը հնարավոր է դառնում մի շարք փոխկապակցված տեսական և գործնական մեթոդների և աշխատաձևերի կիրառմամբ: Այն համալիր և շարունակական գործընթաց է, որի հիմքում ընկած է թանգարանի կրթական հայեցակարգի մշակումը և դրանից բխող միջոցառումների կազմակերպումը, նոր ձևերի հայտնաբերումն ու ներդրումը:

Թանգարանային ցանկացած կրթամշակութային ծրագիր՝ շրջայց, խաղ-շրջայց, դասախոսություն, թանգարանային դաս, պարապմունք և այլն, իրականացնելուց առաջ անհրաժեշտ է կազմել տվյալ ծրագրի համապատասխան նախագիծ-առաջարկը*:

Նախագիծ-առաջարկը սովորաբար նախատեսում է՝

- թեմայի,
- լսարանի,
- նպատակի,
- խնդիրների,
- սկզբունքների,
- աշխատաձևերի,
- աշխատավայրի,
- մեթոդների,
- հնարքների,
- միջոցների,
- աշխատանքի տևողության ընտրությունն ու հիմնավորումը, ինչպես նաև՝
- սպասվելիք արդյունքներն ու դրանց գնահատումը:

Թանգարանի խորհրդի կողմից հավանության արժանացած նախագիծ-առաջարկը դառնում է պաշտոնական փաստաթուղթ, որով առաջնորդվում են թանգարանի կրթական ծրագրերով զբաղվող գիտաշխատողները: Նախագիծ-առաջարկի մեջ նշվում է հեղինակը և ծրագրի հաստատման ժամանակը: Ընթացքում կարելի է կատարել նաև գիտական վերջին հետազոտություններից կամ ծրագրի փորձից բխող փոփոխություններ:

ԹԵՄԱ

Թեմայի ընտրությունը և հիմնավորումը նախագիծ-առաջարկի մշակման առաջին և կարևորագույն փուլն է: Այն հանդիսանում է տվյալ կրթական ծրագրի գիտական հենքը, որի միջոցով այցելուի թանգարանային հաղորդակցումը դառնում է ուսանելի:

Թեմայի ընտրությունն իրականացվում է հետևյալ փուլերով՝

- առաջարկված խնդրի նպատակահարմարության հիմնավորում,
- հիմնական բովանդակային բաղկացուցիչների հաստատում (հակիրճ՝ թեմատիկ կառուցվածքը),

* Այս թեմայի շուրջ տես նաև՝ Музееведение. Музеи исторического профиля: Учеб. пособие для вузов по спец. «История»/ Под ред. К.Г. Левыкина, В. Хербста. М.: Высш. шк., 1988, էջ 274-287, Артемов Е.Г., Музейно-педагогическая технология. СПб., ГМ ПИР, 1999.

- ծրագրի համար նախատեսված միջոցների հակիրճ բնութագիրը, այդ թվում՝ հավաքածուի կամ ընդգրկված թանգարանային առարկաների ցանկը, թանգարանում համապատասխան տարածքի, տեխնիկական և այլ միջոցների առկայությունը (կարևոր է նշել թանգարանային առարկաների պահպանության վիճակը և անհրաժեշտության դեպքում կիրառել կրկնօրինակները),
- թեմայի հիմնական յուրահատկությունների և ենթադրյալ լսարանի կողմից ընկալման հակիրճ վերլուծությունը:

Թեմաները կարող են անդրադառնալ ամբողջ ցուցադրությանը կամ լինել մասնագիտացված՝ ըստ թանգարանի թեմատիկ բաժինների, ընտրված լսարանի, որի համար նախատեսված է այս կամ այն աշխատաձևը: Դրանք կարող են բխել նաև այն իմացական և դաստիարակչական նպատակից, որին միտված է տվյալ կրթական միջոցառումը: Թեմայի ընտրությունն, անշուշտ, կախված է թանգարանի մասնագիտացումից, սակայն, պատմական և գրական թեմաներով ծրագրեր կարելի է կազմակերպել տարբեր թանգարաններում: Այսպես, պատմական շրջայց հնարավոր է անցկացնել երկրագիտական, հուշային թանգարաններում կամ նույնիսկ արվեստի թանգարաններում, երբ թեման առնչվում է որևէ պատմական իրադարձության (օր., Հայաստանի ազգային պատկերասրահի՝ Վ. Սուրենյանցին նվիրված սրահի մի շարք կտավների հիման վրա կարելի է ներկայացվող դարաշրջանին, տարածքին և բովանդակությանը համապատասխան պատմական թեմաներով ծրագրեր իրականացնել): Գրականությանն առնչվող թեմատիկ շրջայցեր կարելի է կազմակերպել ոչ միայն գրական, հուշային և երկրագիտական, այլև պատմական թանգարաններում, քանի որ այստեղ ևս պատմական դարաշրջանից բացի ներկայացվում է այդ ժամանակաշրջանի մշակույթը և գրականությունը: Առանձնապես բազմաբնույթ թեմաներ կարելի է ընտրել երկրագիտական թանգարաններում՝ կազմակերպելով տարբեր կրթամշակութային ծրագրեր՝ պատմական, աշխարհագրական, բնագիտական, գրական, քաղաքական և շատ այլ թեմաներով:

ԼՍԱՐԱՆ

Թանգարանի կրթական գործունեության և առանձին նախագծերի կազմակերպման գործընթացում կարևորվում է թանգարանային լսարանի ուսումնասիրությունը, որն ընդգրկում է ոչ միայն թանգարանի իրական, այլև ենթադրյալ այցելուներին: Լսարանի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս կատարելագործել այցելուների տարբեր խմբերի հետ իրականացվող աշխատանքի մեթոդները և ստեղծել նոր կրթական

հնարավորություններ այլ խմբերի ներգրավման համար: Կարևոր է հաշվի առնել այցելուների կազմը, նրանց տարիքային, կրթական և հոգեբանական առանձնահատկությունները, ինչպես նաև թանգարան այցելելու շարժառիթները, որոնց մեջ կարելի է առանձնացնել սոցիալական, ճանաչողական, թանգարանային առարկայով հիմնավորված, ինքնաճանաչողական և այլ առիթով իրականացվող այցելությունները:

Լսարանի յուրահատկությունների և կոնկրետ խմբի հետ աշխատաձևերի ընտրությունը կանխորոշում է այցելուների հետ թանգարանային կրթության մասնագետի առավել արդյունավետ հաղորդակցումը: Սա է պատճառը, որ նախագիծ-առաջարկի հաջորդ քայլը լսարանի ընտրությունն է, որի համար պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները՝

Թիրախային խումբը.

- նախադպրոցականներ,
- դպրոցականներ,
- ուսուցիչներ,
- ուսանողներ,
- ընտանեկան խմբեր,
- տարեցներ,
- համայնքային խմբեր՝ էթնիկ խմբեր, հատուկ կարիքներով անձինք,
- մասնագետներ,
- կամավորներ,
- գործընկերներ,
- զբոսաշրջիկներ,
- և այլն:

Յուրահատկությունները.

- տարիքային,
- կրթական,
- հոգեբանական,
- պահանջմունքային,
- մասնագիտական,
- այլ:

Թանգարանի լսարանը լավ ճանաչելն ու նրա պահանջները հաշվի առնելը դժվար, բայց

անհրաժեշտ պայման է, քանի որ դա վկայում է թանգարանի աշխատակազմի մասնագիտական հմտություններին և կոչմանը համապատասխան գործելու մասին:

Թեման և լսարանը որոշելուց հետո պետք է ձևակերպել թանգարանում այցելուների գտնվելու նպատակներն ու խնդիրները:

ՆՊԱՏԱԿԸ

Նպատակը նախագիծ առաջարկի ցանկալի և կանխամտածված արդյունքն է, որի իրագործմանն ուղղված է միջոցների և աշխատաձևերի համակարգված և շարունակական կիրառումը: Ցանկացած կրթական նախագիծ պետք է ունենա հստակ նպատակներ, որոնք ըստ ICOM-ի «Լավագույն փորձ» փաստաթղթի, կարող են լինել՝

ընդհանուր, ինչպես օրինակ՝

- կրթական,
- դաստիարակչական,
- ուսումնական,
- ճանաչողական,
- ժամանցային

կամ **կոնկրետ**, ինչպես օրինակ՝

- որևէ արվեստագետի ներկայացում,
- նոր լսարանի ներգրավում և այլն:

ԽՆԴԻՐՆԵՐԸ

Թանգարանային կրթական նախագծի խնդիրները բխում են առաջադրվող նպատակից: Թանգարանային կրթության մասնագետը կարող է այցելուների հետ աշխատանքի ընթացքում լուծել հետևյալ խնդիրները՝

- պատմական գիտակցության ձևավորում,
- հայրենիքի պատմության հանդեպ հետաքրքրության խթանում,
- պատմամշակութային ժառանգության նկատմամբ հոգատար վերաբերմունքի դաստիարակություն,
- թանգարանային մշակույթի ձևավորում,
- թանգարանագիտության հիմունքների ծանոթացում,

- որպես եզակի պատմամշակութային առարկաների պահոց՝ թանգարաններին կատմամբ հարգալից վերաբերմունքի և գնահատանքի դաստիարակում:

ԱՇԽԱՏԱՁԵՎԸ

Ծրագրի հաջողությունը կախված է նաև լսարանի հետ աշխատելու ձևերի, այսինքն՝ թանգարանի աշխատակցի և այցելուի կրթադաստիարակչական, ստեղծագործական հաղորդակցության եղանակների ընտրությունից: Նախագիծ-առաջարկը կազմելիս անհրաժեշտ է հիմնավորել նաև աշխատաձևը:

Նշենք առավել տարածվածները՝

- շրջայց (ակնարկային, թեմատիկ, ուսումնական, մասնագիտական և այլ),
- թանգարանային դաս,
- թանգարանային պարապմունք,
- թանգարանային խաղ,
- ժամանցային միջոցառում,
- դասախոսություն,
- ֆիլմի դիտում,
- համակարգչային խաղեր,
- աուդիոգիդ (լսողական սարքերով իրականացվող շրջայց):

Թանգարանային աշխատանքի ձևերն անընդհատ զարգանում և կատարելագործվում են: Ելնելով թանգարանի բնույթից և նպատակից՝ թանգարանային կրթության մասնագետը կարող է ընտրել այս կամ այն ձևը, իսկ երբեմն էլ միևնույն ծրագրում ընդգրկել մի քանիսը:

Ընտրված աշխատաձևն առավել արդյունավետ և այցելուի համար հարմարավետ պայմաններում կազմակերպելու համար անհրաժեշտ է թանգարանային տարածքի ընտրությունը: Այն կարող է ընդգրկել

թանգարանի տարածքը՝

- ցուցահանդես,
- կրթական միջոցառումների տարածք,
- հատուկ տարածք (ֆոնդային սենյակ, գրադարան, դահլիճ և այլն),
- բացօթյա տարածք

կամ **թանգարանից դուրս տարածք՝**

- ցանկացած կրթօջախ,

- ծերանոց,
- հանրային տարածք և այլն:

Տարբեր թիրախային խմբերի պահանջների և թանգարան այցելելու շարժառիթների ուսումնասիրությունն իր հերթին կանխորոշում է թանգարանի կրթամշակութային գործունեության կազմակերպման համար կիրառվող մեթոդների և հնարքների ընտրությունը:

ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐՔՆԵՐԸ

Մեթոդը նպատակին հասնելու միջոց է, կրթամշակութային խնդիրների լուծման համար կիրառվող թանգարանային կրթական հնարքների համակարգ.

- «Խորասուզում» միջավայրի մեջ. այցելուին հնարավորություն է ընձեռում խորհրդանշորեն հայտնվել այլ մշակութային տարածքում: Այս մեթոդի կիրառման գործընթացին մասնակցում են այցելուի գրեթե բոլոր զգայարանները:
- Իրադարձությունների դերային «վերապրում». այցելուն կերպափոխվում է՝ ստանձնելով պատմական հերոսի կամ այլ գործող անձի դերը: Թանգարանի աշխատակցի օգնությամբ, միմյանց հետ հաղորդակցվելիս, այցելուները համապատասխան սոցիալական դերեր են կատարում: Այս մեթոդը թույլ է տալիս ընդգրկել այցելուի և՛ բանականությունը, և՛ զգացմունքը, և՛ երևակայությունը:
- Տեղեկատվական. պատրաստի տեղեկության հաղորդում:
- Արդյունավետ. նախատեսում է խնդրի առաջարկում և լուծում:
- Վերարտադրողական. այցելուի հետ աշխատելիս հանձնարարությունների համակարգ է կիրառվում:
- Հետազոտական. այցելուին դրդում է դիմել սկզբնաղբյուրին, թանգարանային առարկային, սեփական ուժերով փորձել տեղեկություններ հայթայթել: Ենթադրում է ակտիվացնել այցելուի մտավոր գործունեությունը՝ հիմնվելով նրա անձնական փորձի վրա:
- Վերակառուցողական. նախատեսում է ինչպես մտավոր, այնպես էլ առարկայական՝ ցուցանմուշների, մանրակերտների, օժանդակ նյութերի, համակարգչային տեխնոլոգիաների օգնությամբ պատմական փաստի, իրավիճակի, իրադարձության վերականգնում:
- Համեմատական անալոգիաների (միանմանություն). հնարավորություն է ստեղծում

անցյալում և ներկայում առկա փաստերի, իրավիճակների, հասկացությունների նմանությունները գտնելով՝ պատմական երևույթների վերաբերյալ նոր եզրահանգումներ անել:

- Մոդելավորման. թանգարանային երկխոսության տեսակ է, երբ խմբին առաջարկվում է, հիշողության և երևակայության միջոցով մտովի կառուցել իրավիճակներ, դեպքեր, երևույթներ, պատմական ընթացք:
- Համեմատական վերլուծության. թանգարանային մասնագետից պահանջում է այցելուների ճանաչողական, մտավոր ջանքերն ուղղորդել՝ համեմատելու և համադրելու առարկայի տարբեր կողմերը, հատկությունները, բաղադրիչները:
- Խրախուսման:

Այցելուների հետ աշխատելու հնարքներն են՝

- զրույց,
- կոլեկտիվ բանավեճ,
- մեկնաբանություն,
- խաղ և այլն:

Միջոցները՝

- հիմնական և օժանդակ թանգարանային առարկաներ,
- տեսալսողական սարքավորումներ,
- տեխնիկական միջոցներ,
- դիդակտիկ նյութեր,
- աշխատանքային տետրեր,
- լուսանկարներ,
- տեղեկատվական վահանակներ,
- ուղեցույցներ:

Աշխատանքի տևողությունը՝

- անհրաժեշտ ժամանակի կարճ հիմնավորումը,
- աշխատաժամանակի բաժանում ըստ աշխատաձևերի, երթուղու, խնդիրների ծանոթացում, բուն ծրագիր, ստեղծագործական հատված, քննարկում, ամփոփում:

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Լսարանի հետ յուրաքանչյուր հանդիպման սցենարը կազմելիս թանգարանային կրթության մասնագետը նախատեսում է հաղորդակցության այն սկզբունքները, որոնք առավելագույնս կնպաստեն տվյալ խմբի հետ արդյունավետ աշխատելուն և նախագծի կրթական ներուժի առավելագույն բացահայտմանը: Ներկայացնենք թանգարանում կրթադաստիարակչական աշխատանքի մի քանի սկզբունք, նշելով, որ դրանց թիվը չի սահմանափակվում ներքո-հիշյալներով:

Երկխոսություն. թանգարանային հաղորդակցության և թանգարանային մանկավարժության գլխավոր գործիքն է: Այս սկզբունքի ճիշտ և տեղին կիրառումն ապահովում է թանգարանային մանկավարժի և այցելուի հավասար և ներդաշնակ համագործակցությունը, նպաստում ներկայացվող նյութն այցելուի կողմից վերապրելուն: Թանգարանում այցելուից և թանգարանային մանկավարժից բացի երկխոսությանը մասնակցում են նաև թանգարանային առարկան, թանգարանային տարածքը և, նույնիսկ, անցյալն ու ներկան (Ե.Գ. Արտյոմով):

Նպատակային դիրքորոշում. հնարավորություն է տալիս խմբի հետ աշխատելիս նպատակից բխող համալիր միջոցների, մեթոդների ու հնարքների ընտրություն կատարել:

Հասցեականություն, կողմնորոշում դեպի անհատը. թանգարանային աշխատողից պահանջում է աշխատանքի ողջ ընթացքում հաշվի առնել այցելուի անհատական, տարիքային, հոգեբանական, մտավոր, կրթական, ֆիզիկական և այլ առանձնահատկությունները:

Հաջորդականություն. առաջնորդվել թանգարանի տարածքի, մատուցվող նյութի, յուրացման աստիճականության սկզբունքով՝ հաշվի առնելով այցելուի նախորդ փորձը, գիտելիքները, հետզհետե «բարձրանալ» պատմական, մշակութային և այլ գիտելիքների «աստիճաններով»:

Համալիր. նախատեսում է տարբեր բնագավառներին առնչվող գիտելիքների և լսարանի հետ աշխատելու տարբեր մեթոդների, հնարքների ու ձևերի համադրում:

Արդյունավետություն. հնարավորություն է ընձեռում թանգարանային մանկավարժության նորագույն տեխնոլոգիաները կիրառելիս իրականացնել նաև դրանց արդյունավետության ստուգումը:

Ինտերակտիվություն. ապահովում է այցելուի փոխազդեցությունը թանգարանային միջավայրի, խմբի այլ անդամների, թանգարանային մասնագետի հետ:

Եզակիություն. յուրաքանչյուր այցելու ակնկալում է, թանգարանում ստանալ և՛ իմաստով, և՛ ձևով որևէ հազվագյուտ, խորհրդանշական, նոր ու աննսովոր տեղեկություն: Այս սկզբունքը թանգարանային մասնագետից պահանջում է արդարացնել այցելուի սպասելիքները:

Փոխադարձ կապ. աշխատանքը պլանավորելիս պետք է նախատեսել նաև այցելուի կողմից թեման յուրացնելու ստուգման հնարքներ ու ձևեր:

Ինչպես նշեցինք, կրթադաստիարակչական գործընթացն իրականացնելու նպատակով կիրառվող սկզբունքները չեն սահմանափակվում ներկայացվածներով: Լսարանի հետ աշխատանքը պլանավորելիս թանգարանային մանկավարժը պետք է առաջին հերթին ընտրի այն սկզբունքները, որոնք առավել նպաստավոր կլինեն տվյալ խմբի համար նախատեսված խնդիրների լուծմանը: Հաջողությունը կախված է նաև լսարանի հետ աշխատելու ձևերի, այսինքն՝ թանգարանի աշխատակցի և այցելուի կրթադաստիարակչական, ստեղծագործական հաղորդակցության եղանակների ընտրությունից:



ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԱԽԱԳԾԵՐ

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան

Թանգարանային կրթությունը, որպես թանգարանի գիտահետազոտական գործունեության ոլորտ, սերտորեն կապված է մանկավարժության, թանգարանագիտության, հոգեբանության և սոցիոլոգիայի հետ: Այս գործընթացը ճիշտ կազմակերպելու համար հաշվի են առնվում այցելուների տարբեր խմբերի առանձնահատկությունները, կիրառվում հոգեբանական և մանկավարժական նոր մեթոդներ: Կրթամշակութային ծրագրեր նախապատրաստելիս և իրականացնելիս՝ թանգարանի կրթական մասնագետները պետք է հաշվի առնեն մասնակիցների ընդունակությունները, բնավորությունը, խառնվածքը, ինչպես նաև բնական հատկանիշները՝ հիշողություն, երևակայություն, ըմբռնելու կարողություն և այլն: Կարևոր է նաև հիշել, որ կոնկրետ խմբի ակտիվության մակարդակը կախված է, խմբի յուրաքանչյուր անդամի հոգեվիճակից: Որպեսզի այցկատուները իրենց լավ զգան, սիրով մասնակցեն թանգարանային այս կամ այն ծրագրին, անհրաժեշտ է, մշակել աշխատակցի հատուկ

մեթոդներ՝ ելնելով նրանց տարիքային, հոգեբանական առանձնահատկություններից:

Կրտսեր դպրոցական տարիքի՝ 6-9 տարեկան երեխաները թանգարանի մշտական այցելուներն են և կարող են պարբերաբար այցելել ու ներգրավվել թանգարանային կրթության ոլորտում: Թանգարանում նրանց համար կազմակերպվում են հատուկ շրջայցերի շարքեր, որոնց բուն նպատակը փոքրիկ այցելուներին աստիճանաբար զարգացնելն ու կրթելն է: Նման շրջայցերի բնույթն ու բովանդակությունը լիովին համապատասխանում են այդ տարիքային խմբի հոգեբանությանը: Թանգարանային միջավայրում այս խմբի երեխաների գիտելիքների ու անհատականության ձևավորումն ընթանում է երկու փոխկապակցված գործընթացների միջոցով՝

- անմիջական ընկալում,
- առարկայի և երևույթի խոսքային նկարագրության յուրացում:

Դպրոցում ստացած գիտելիքների շնորհիվ կրտսեր դպրոցականների ճանաչողական գործընթացն առավել խորը և գիտակցված է իրականացվում: Այս տարիքում երեխաներին հաճախ հետաքրքրում է տարբեր երևույթների պատճառը: Նրանց ձեռք բերած գիտելիքներն աստիճանաբար որոշարկվում և համակարգվում են: Ըստ այդմ՝ թանգարանում նրանց կրթական գործընթացը պետք է հիմնվի ոչ միայն հիշողության, այլև նոր ձեռք բերված գիտելիքների հիմնավորման և հանձնարարված հարցերի կամ առաջադրանքների պատասխաններն ինքնուրույն գտնելու վրա: Այս տարիքային խմբի մոտ հաճախ է նկատվում նաև ավագ դպրոցականներին հատուկ գծեր: Նրանց բնորոշ են ընկալման սրությունն ու թարմությունը, ակտիվ հետաքրքրասիրությունը: Երեխաները բնական հետաքրքրությամբ և վառ արտահայտված զգացմունքներով են արձագանքում միջավայրին և, հաճախ, մտածելակերպը սկսում է ձեռք բերել տրամաբանական, խոսքային գծեր: Կրտսեր դպրոցականների ուսուցման ընթացքում կատարելագործվում է վերարտադրելու ունակությունը, և զարգանում են ստեղծագործական կարողությունները: Նրանք հակված են ծանոթ կերպարներն ընդհանրացնելով՝ երևակայական պատմություններ ու հեքիաթներ հորինել, ստեղծել մտացածին պատկերներ:

Քանի որ այս տարիքի երեխաների ուշադրությունն անկայուն է, թանգարանային ուսուցողական ծրագրերի ընթացքում հարկ է զարգացնել կամային ուշադրությունը, սերմանել հմտություններ, որոնք կնպաստեն կենտրոնանալուն: Այդուհանդերձ, պետք է պահպանել շրջայցի ձևն ու բովանդակությունը, քանի որ այն արվեստի նկատմամբ երեխայի հետաքրքրությունը խթանելու հիմնական գործոնն է: Բնականաբար, ուսուցման

համապատասխան մեթոդ ընտրելու առումով այս տարիքային խմբի հետ աշխատելիս խիստ կարևորվում են կրթական ծրագրավարի գիտելիքներն ու փորձը: 6–8 տարեկան երեխաներին հրապուրում է սյուժեն, որի շրջանակներում նրանք հերոսների հետ վերապրում են նկարագրվող իրադարձությունը, փորձում դրական կամ բացասական գնահատական տալ նրանց վարքագծին: Միաժամանակ նրանց մոտ հայտնվում է ոչ միայն սյուժեն վերապրելու, այլև պատկերվող իրադարձության ներքին մթնոլորտն ընկալելու ունակություն: Օրինակ՝ բնապատկերում բնության վիճակը կամ դիմանկարում արտահայտված տրամադրությունը, որոնց մասին նրանք պատրաստ են դատողություններ անել և իրենց վերաբերմունքն արտահայտել:

8–9 տարեկան երեխաներն, արվեստի վերաբերյալ որոշ նվազագույն տեղեկություններ ու մի քանի տերմին յուրացնելով, արդեն կարողանում են համադրել և տարրական մակարդակով վերլուծել գեղարվեստական կյանքի փաստերը: Նրանք աստիճանաբար կարողանում են նաև համակարգել պարապմունքների ընթացքում ներկայացվող նյութը, որը հնարավորություն է տալիս հետզհետե ընդլայնել այցերի թեմաները:

Ինչպես նախադպրոցականների, այնպես էլ այս տարիքի երեխաների հետ առավել արդյունավետ է շրջայցը կառուցել երկխոսության սկզբունքով՝ դիդակտիկ խաղերի, զարգացնող վարժությունների, ստեղծագործական առաջադրանքների լայն կիրառմամբ: Սակայն, ի տարբերություն նախադպրոցականների, կրտսեր դպրոցականների հետ աշխատելաձևերն ավելի բազմազան են ու պրակտիկ: Այս տարիքային խմբին կարելի է հանձնարարել փոքրիկ շարադրություններ թանգարանի, ցուցադրության կամ շրջայցից ստացած տպավորությունների մասին, կարելի է կազմակերպել փոքրիկ քննարկումներ, որոնք նրանց թույլ կտան ազատ ու ամբողջությամբ արտահայտել միտքն ու զգացողությունները:

Քանի որ շրջակա աշխարհի ընկալումը կրտսեր դպրոցականների շրջանում առավել իմաստավորված է՝ էքսկուրսիայի ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել արժեքային համակարգի ձևավորման խնդրին և ցուցադրության միջոցով նպաստել մշակույթի ըմբռնման հմտությունների յուրացմանը: Այս տիպի այցերի հիմնական նպատակը կարելի է համարել երեխաների աշխարհայացքում թանգարանային մշակույթի ձևավորումը, այսինքն՝ թանգարանի հազվագյուտ ցուցանմուշների, թանգարան այցելելու ներքին պահանջի, թանգարանային առարկայի՝ մշակութային ժառանգության նկատմամբ հոգատար վերաբերվելու և գնահատելու հատկությունները: Այս խնդրի իրականացմանը կարելի է հասնել տարբեր խաղ-շրջայցերի, դաս-շրջայցերի և այլ միջոցառումների միջոցով:

Կրտսեր դպրոցականների հետ թանգարանում անցկացվող աշխատանքներում հատուկ նշանակություն ունի նաև տեսողական գրագիտության ձևավորումը: Այն նպաստում է դիտողականության, ստացված տպավորությունը վերլուծելու և ընդհանրացնելու, տեսածը հուզականորեն վերապրելու, ստեղծագործաբար ընկալելու և ըմբռնելու կարողությունների խթանմանը: Ուստի, այս տարիքի երեխաների համար ծրագիր կազմակերպելիս, անհրաժեշտ է նրանց նյութը զննելու, տպավորություններն արտահայտելու հնարավորություն տալ, ինչպես նաև՝ այս կամ այն ստեղծագործության գեղարվեստական տարրերի և առանձնահատկությունների մասին երկխոսելու ցանկություն առաջացնել: Արվեստի մասին ընդհանուր բնույթի տեղեկությունները պետք է հիմնվեն նյութի ամբողջական ըմբռնման վրա և ամրապնդվեն որոշակի տեսողական ու զգայական տպավորություններով:

Միջին դպրոցական տարիք: 10–15 տարեկանում երեխաները մանկությունից անցում են կատարում դեպի հասունություն: Այս շրջանը պայմանականորեն անվանվում է միջին դպրոցական տարիք: Փոխվում են պատանիների կյանքի պայմանները և գործունեությունը, վերակառուցվում է հոգեբանությունը, փոխվում են նախկին հարաբերությունների ձևերը: Ուսումնական գործընթացում ձևավորվում է դեռահասների վերլուծական միտքը, դարգանում ակտիվ և ինքնուրույն մտածելու, դատողություններ, համեմատություններ, ընդհանրացումներ և եզրակացություններ անելու ընդունակությունը: Այս տարիքում հիշողությունը և ուշադրությունն էական փոփոխություններ են կրում, դառնում ավելի կամային և կազմակերպված: 10–12 տարեկան երեխաների մոտ առաջանում է, այսպես կոչված, «բնական ճգնաժամը», որը հոգեբանները տարբեր կերպ են մեկնաբանում: Այս ընթացքում շատ փոփոխություններ են կատարվում դեռահասի զգայական, հոգեկան վիճակներում: Փոխվում են անձի թե՛ աշխարհընկալումը, թե՛ գիտակցման մակարդակը և թե՛ արժեքները: Ավելի արագ է ընկալում տեղեկատվությունը, զարգանում են տրամաբանությունն ու դատողական մտածողությունը: Նկատելի հետաքրքրություն է առաջանում մասնագիտական կրթության, արվեստի, գեղարվեստական, պատկերային լեզվի, պատմության տարբեր փուլերի վերաբերյալ առավել կանոնավոր և խորը գիտելիքներ ստանալու առումով: Ըստ այդմ՝ դեռահասների համար նախատեսված ծրագրերում անհրաժեշտ է ընդգրկել թեմատիկ էքսկուրսիաների շարքեր, որոնք հնարավորություն կտան առավել ընդլայնել նրանց գիտելիքները:

Այս տարիքի բնորոշ առանձնահատկություններից են բարոյականության գիտակցությունը, ինքնագիտակցությունը, հասունության զգացողությունը, ինքնուրույնության ձգտումը, հերոսի կամ իդեալի որոնումը, որը հաճախ կրկնօրինակման առարկա է դառնում: Դա կարող է լինել

որևէ հասարակական կամ քաղաքական գործիչ, ժամանակակից երգիչ կամ դերասան, մշակույթի ներկայացուցիչ կամ պարզապես հասակակիցներից որևէ մեկը: Այս կերպարում կարող է հայտնվել նաև սիրած նկարիչը: Նկարչի ճակատագրի և անձի մասին թանգարանային կրթության մասնագետի ճիշտ ընտրած պատմությունը կարող է գրավել դեռահասին և արվեստի նկատմամբ խորը հետաքրքրության առիթ դառնալ: Ըստ վերը ներկայացված առանձնահատկությունների ու նախասիրությունների՝ թանգարանում դեռահասների հետ իրականացվող աշխատանքների թեմաներն ու ձևերն առավել բազմաբնույթ կարող են լինել: Բացի արվեստի պատմության և կիրառական արվեստի մասին շրջայցերից նրանց կարելի է առաջարկել մենագրության ոճի շարքեր. օրինակ՝ զրույցներ նկարիչների կամ գիտնականների մասին: Շրջայցի ընթացքում դիդակտիկ խաղերից և վարժություններից բացի կարելի է լայնորեն կիրառել նաև երկխոսությունը, զրույցը, քննարկումը՝ որպես այդ տարիքին առավել համապատասխան հոգեբանական ձևեր: Ուշադրություն պետք է դարձնել ձայնի վստահ արտահայտչամիջոցների ու ելևէջների վրա, որը երեխաների մոտ նյութի նկատմամբ առավել հետաքրքրություն և վստահություն է առաջացնում:

Դպրոցականների հետ աշխատանքում արդյունավետ է «խնդրահարույց» անվանումը ստացած մեթոդը, երբ ստեղծվում է գիտելիքի «նվաճման» իրավիճակ, այսինքն՝ գիտելիքը չի մատուցվում պատրաստի ձևով: Էքսկուրսիայի ժամանակ պետք է խուսափել պատրաստի տեղեկատվության հաղորդումից, այլ պետք է ստեղծել այնպիսի իրավիճակ, որ դպրոցականը մտքի լարումով գտնի առաջադրված հարցերի պատասխանները և տրամաբանական եզրահանգում կատարի: Օրինակ, կարելի է մի քանի փոքր խմբերի առաջարկել տարբեր իրավիճակներ ստեղծել և յուրաքանչյուրին հանձնարարել դրանց համապատասխան շարունակություն գտնել:

Դեռահասների հետաքրքրությունը հատկապես ակտիվանում է ինքնուրույն աշխատանքի ընթացքում, որը կարելի է զարգացնել թանգարանային միջավայրում: Եվ այսօր թանգարանների առջև մեծ խնդիր է ծառացել՝ երեխաներին սովորեցնել ինքնուրույնության: Օրինակ, կարելի է ցուցադրությունն այնպես կազմակերպել, որ դիտումը վերածվի ստեղծագործական հետազոտության: Այս մեթոդը վաղուց և արդյունավետ կիրառվում է արտասահմանյան թանգարաններում: Ռուսական շատ թանգարաններ դպրոցականների համար ստեղծել են «ակտիվության թերթիկներ», «աշխատատետրեր», «ստեղծագործական առաջադրանքներ», որոնք երեխաները ինքնուրույն օգտագործում են ցուցադրության դիտման ընթացքում: Այս մեթոդի արդյունավետությունը հաստատում են թանգարանային կրթության մասնագետների և հոգեբանների հետազոտությունների արդյունքները:





Թանգարան - **Հովհաննես Թումանյանի թանգարան**

Ծրագրի անվանում - **«Թանգարանային համալսարան»**

Թիրախային լսարան - հիմնականում դպրոցականներ (5- 12-րդ դասարաններ)

Որտեղ - Հովհաննես Թումանյանի անձնական գրադարանի հարևանությամբ՝ Թումանյանի թանգարանում

Խումբ - 20-25 հոգի

Տևողություն - 45 րոպե


Նկարագրություն - ուղեցույց ունենալով Թումանյանի անձնական գրադարանի թեմատիկ բազմազանությունը՝ ազգագրություն, բժշկագիտություն, կրոն, երկրաբանություն, ֆիզիկա, աստղագիտություն և այլն, անցկացվում են հանրամատչելի և հետաքրքիր մատուցմամբ դասախոսություններ՝ համապատասխան ֆիլմերի կամ նյութերի կիրառմամբ: Յուրաքանչյուր դասախոսությանը զուգահեռ կազմակերպվում է ժամանակավոր ցուցադրություն՝ գրադարանի տվյալ թեմայով գրքերով:

Նպատակ -

- ընդլայնել դպրոցականների մտահորիզոնը գիտության վերջին ձեռքբերումներով,
- հաղորդակից դարձնել անցյալի արժեքներին,
- լրացնել դպրոցական համապատասխան դասագրքերում եղած բացթողումները,
- խթանել ընթերցասիրություն:

Անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և գիտաօժանդակ նյութեր - համակարգչային տեխնիկա, արտագնա միջոցառումներ /հնագիտական պեղումներ, այց աստղադիտարան և այլն/:

Ներգրավված անձինք - ճանաչված և սիրված մշակութային գործիչներ, արվեստագետներ, աստղաֆիզիկոս, տոմարագետ, ազգագրագետ, մշակութաբան:





Թանգարան – **Հովհաննես Թումանյանի թանգարան**
Ծրագրի անվանում – **«Բզեզի դպրոց» ամառային պարտեզ»**
Թիրախային լսարան – 4 – 6 տարեկան երեխաներ
Որտեղ – թանգարանի հիասքանչ ու գողտրիկ ամառային այգում՝ պտղատու և դեկորատիվ ծառերով ու ծաղիկներով զարդարված:
Խումբ – մինչև 20 հոգի
Տևողություն – 3 ժամ. առավոտյան 11-ից 2-ը՝ ընդմիջում-ճաշիկով:
Նկարագրություն – թումանյանական հայտնի «բզեզի» օրինակով ստեղծվել է «դպրոց», որտեղ երեխաներին հանրամատչելի գիտելիքներ են հաղորդվում. բույսերի, կենդանիների մասին լեգենդներ, իրերի ծագման վերաբերյալ պատմություններ՝ համադրված երաժշտությամբ և նկարչությամբ, խաղերով, զանազան փոքրիկ բեմականացումներով: Երեխաներն իրենք են հիմնականում հանդես գալիս և՛ որպես խաղավար, և՛ մասնակից:

Նպատակ –

- զարգացնել մտավոր և ֆիզիկական ունակությունները,
- նպաստել աշխարհաճանաչողությանը,
- տալ համապատասխան գիտելիքներ:

Անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և գիտաօժանդակ նյութեր – մանկական գրքեր, նկարելու պարագաներ, երաժշտական կենտրոն, զանազան խաղեր, այդ թվում՝ Թումանյանի հեղինակած խաղերից, գնդակ, ցատկապարան և այլն:
Ներգրավված անձինք – ծրագիրն իրականացնողներ (2 հոգի), մանկական հոգեբան, հրավիրված մասնագետներ:





Թանգարան – **Երևան քաղաքի պատմության թանգարան**

Ծրագրի անվանում – **«Գիտունիկը Երևան քաղաքի պատմության թանգարանում» խաղ-շրջայց**

Թիրախային լսարան – 4-6 տարեկան երեխաներ

Որտեղ – թանգարանի երեք սրահներում:

Խումբ – 10-30 երեխա

Տևողություն – 20-30 րոպե

Նկարագրություն – տիկնիկ «Գիտունիկը» էքսկուրսավարի օգնությամբ դիմավորում է երեխաներին թանգարանի շքամուտքի մոտ, որտեղից էլ սկսում է իր պատմությունները Էրեբունի-Երևանի մասին: Առաջին հերթին ներկայացնում է քաղաքի քարի «անձնագիրը»՝ մեծ սեպագիր արձանագրությունը: Երեխաները Գիտունիկի հետ միասին բարձրաձայն հնչեցնում են Էրեբունին հիմնադրող արքայի անունը, քաղաքի տարիքը, որից հետո բարձրանում առաջին սրահ: Այստեղ նրանց ներկայացվում են մի քանի առավել հետաքրքիր ցուցանմուշներ՝ քարանձավի մանրակերտը, մամոնտի ժանիքի և ատամի հատվածները և այլն: Որպեսզի ստացած տեղեկատվությունը երեխաների մեջ ավելի լավ ամրապնդվի, Գիտունիկը ամեն սրահի վերջում հարցեր է տալիս, զգուշացնելով, որ սրահի դուռը փակվել է և կբացվի միայն ճիշտ պատասխանների դեպքում: Փոքրիկները ոգևորված բարձրանում են երկրորդ սրահ, որտեղ նրանց սպասում են ազգային տոները խորհրդանշող տիկնիկները՝ Ուտիս տատը, Պաս պապը և Ակլատիզը: Զարմացի Գիտունիկը շրջում է սրահով, մտնում հին երևանցու բնակարան, լուսանկարվում լուսանկարչատանր, որից հետո շտապում նստել ձիաքարշ...

Էքսկուրսիան ավարտվում է երդման արարողությամբ: Գիտունիկի հետ միասին երեխաները շրջան կազմելով՝ բարձրաձայն արտասանում են երդման խոսքերը. *«Այցելելով*



Երևան քաղաքի պատմության թանգարան, խոստանում եմ սիրել, պահպանել ու շենացնել մեր քաղաքամայր Երևանը»: Փոքրիկները թանգարանից հեռանում են ուրախ տրամադրությամբ՝ տանելով իրենց հետ վաստակած շնորհակալագիրը Գիտունիկի լուսանկարով:

Նպատակ –

- վաղ հասակից երեխաների մեջ սերմանել թանգարան հաճախելու մշակույթը
- նպաստել գեղագիտական դաստիարակությանը
- հաշվի առնելով տեղեկատվությունը ընկալելու երեխաների տարիքային հնարավորությունները՝ տալ համառոտ տեղեկություններ Երևանի պատմությունից:
- թանգարան այցելությունը դարձնել բովանդակալից և հաճելի:

Անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և գիտաօժանդակ նյութեր – տիկնիկ, շնորհակալագիր:

Ներգրավված անձինք – էքսկուրսավար:



Թանգարան – **Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան**

Ծրագրի անվանում – **«Բացահայտում թանգարանում» խաղ-շրջայց**

Թիրախային լսարան – նախադպրոցական, կրտսեր, միջին և ավագ դպրոցական տարիքի երեխաների համար՝ համապատասխան բարդության առաջադրանքներով:

Որտեղ – թանգարանի մշտական ցուցասրահներում, գրադարան, միջոցառումների դահլիճում

Խումբ – առավելագույնը 15 հոգի

Տևողություն – 1 – 1.5 ժամ

Նկարագրություն – երեխաներին տրվում է դերային առաջադրանք, նրանք դառնում են հետախույզներ և պետք է բացահայտումներ կատարեն թանգարանում:

Խաղ 1. ***Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաներ***

Երեխաներին հրավիրում ենք դահլիճ, զրուցում նրանց հետ, պատմում թանգարանի մասին, ապա առաջարկում ենք «բացահայտումների» տուփից ընտրել քարտեր՝ գրականության, թատրոնի, կինոյի, երաժշտության «աշխարհներից» և հանձնարարում ցուցասրահում փնտրել այդ քարտերի վրա պատկերված իրերը: Ցուցասրահում հերթով մոտենում ենք գտած իրերին և պատմում դրանց մասին: Վերջում, հարց ու պատասխանի միջոցով, վերհիշում ենք այդ օրվա սովորած նյութը:

Խաղ 2. ***Միջին դպրոցական տարիքի երեխաներ***

Ցուցասրահում շրջայցից հետո երեխաները գալիս են դահլիճ և բաժանվում խմբերի՝ յուրաքանչյուր խմբում 3-4 աշակերտ: Այնուհետև մոտենում են սեղաններին, որոնց վրա գտնվում են չդասավորված քարտերը: Խմբերին տրվում է մեկական քարտ և հանձնարարվում նշված ժա-





մանակահատվածում գտնել այդ քարտի թեմայի հետ կապված ևս երեքը: Առաջադրանքը ճիշտ կատարած առաջին խումբը պարգևատրվում է:

Խաղ 3. *Ավագ դպրոցական տարիքի երեխաներ*

Երեխաները բաժանվում են խմբերի՝ յուրաքանչյուր խմբում 2-3 աշակերտ: Նրանք «բացահայտումների» տուփից ընտրում են գրողների և արվեստի գործիչների դիմանկարները, որից հետո սկսվում է հետախուզական աշխատանքը:

Պատանիները պետք է նշված ժամանակահատվածում ճանաչեն լուսանկարում պատկերված անձին, գտնեն տվյալ հեղինակի հետ առնչվող այն բոլոր առարկաները, որոնք ներկայացված են ցուցադրության մեջ և հնարավորինս շատ տեղեկություն քաղել տվյալ հեղինակի մասին:

Ցուցադրությունից հետո նրանք իրենց որոնողական աշխատանքը շարունակում են գրադարանի և ֆոնդերի քարտարաններում: Նախապես նրանց ծանոթացնում ենք քարտարաններից օգտվելու կարգը, ապա բաժանում ենք նոթատետրեր, որոնցում պետք է գրանցեն տվյալ հեղինակի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, որ իրենց հաջողվել է քաղել քարտարաններից:

Ավարտին յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր կատարած «բացահայտումը»: Հաղթում է այն թիմը, որն առավել շատ բացահայտումներ է կատարել:

Նպատակ -

- ինտերակտիվ-դերային խաղի միջոցով հնարավորություն տալ երեխաներին ծանոթանալ հայ գրականության, թանտրոնի, կինոյի և երաժշտության պատմությանը՝ անմիջական կապ ստեղծելով նաև դպրոցական ուսումնական ծրագրերի հետ,

- սովորել ինքնուրույն տեղեկատվություն քաղել, օգտվել թանգարանային և գրադարանային քարտարաններից,
- զարգացնել երեխաների տեսողական հիշողությունը:

Անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և գիտաօժանդակ նյութեր - ցուցանմուշների լուսանկարներով քարտեր, նոթատետր, գրիչ:

Ներգրավված անձինք - կրթության մասնագետ

Ակնկալվող և իրական արդյունք՝

Գրականության բնագավառում.

թանգարանում ցուցադրվող անձնական իրերի, լուսանկարների և ձեռագրերի միջոցով ծանոթանալ հայ մեծանուն գրողների՝ Խ. Աբովյանի, Րաֆֆու, Գ. Սունդուկյանի, Շիրվանզադեի, Հ. Թումանյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Պ. Դուրյանի, Մ. Մեծարենցի, Գ. Զոհրապի, Դ. Վարուժանի, Սիամանթոյի և այլ գրողների կյանքին ու գործունեությանը:

Թատրոնի ասպարեզում.

պատկերացում կազմել 19-20-րդ դարերի հայ պրոֆեսիոնալ թատերախմբերի և հայ թատրոնի մեծերի մասին: Ծանոթանալ թատերական ներկայացման ստեղծման փուլերին և այդ ոլորտի մասնագիտություններին:

Կինոյի ասպարեզում.

գիտելիքներ ձեռք բերել հայ կինոյի վերաբերյալ, մասնավորապես, իմանալ՝ երբ և ում կողմից են ստեղծվել հայկական առաջին համր և ինչյունային ֆիլմերը, ինչպես է ստեղծվում մուլտֆիլմը:

Երաժշտության ասպարեզում.

ծանոթանալ Կոմիտասի, Կարա - Մուրզայի, Արմեն Տիգրանյանի, Ալ. Սպենդիարյանի կյանքին և ստեղծագործություններին: Իմանալ՝ երբ, ում կողմից և ինչպես են ստեղծվել «Արշակ Երկրորդ» և «Անուշ» օպերաները: Պատկերացում կազմել հայ ավանդական նվագարանների մասին, սովորել նվագարանների տեսակները և ճանաչել դրանք:

Գրադարանում.

տիրապետել ինքնուրույն տեղեկատվություն քաղելու, թանգարանային և գրադարանային բարտարաններից օգտվելու հմտություններին:



Թանգարան Հայաստանի ազգային պատկերասրահ

Ծրագրի անվանում «Վարպետի գույների աշխարհում» **(նատյուրմորտ)**

Թիրախային լսարան - 5 7, 8 9, 10 12 տարեկան երեխաներ՝ մանկավարժի ուղեկցությամբ

Որտեղ – Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունների ցուցասրահում

Խումբ - 10 - 15 մասնակից

Տևողություն - 40-50 րոպե

Նկարագրություն - Մարտիրոս Սարյանի մի քանի ստեղծագործությունների մեկնաբանման և վերլուծության արդյունքում մասնակիցները ծանոթանում են նատյուրմորտի ժանրին, գեղանկարչական պարագաներին՝ մոլբերտ, ենթաշրջանակ, կտավ, շրջանակ, վրձին, ներկապնակ և այլն: Այնուհետև նրանք բաժանվում են 2 խմբի: Յուրաքանչյուրին հանձնարարվում է, նախապես տրամադրված մրգերը, բանջարեղենը և այլ առարկաները գտնել համապատասխան նատյուրմորտներում: Թիմերը ձևավորում են մեկական նատյուրմորտ և նկարում մատիտներով:

Նպատակ

- թանգարանային մշակույթի դաստիարակում,
- ծանոթացում Մարտիրոս Սարյանի արվեստին,
- ծանոթացում նատյուրմորտի ժանրին, նկարչական պարագաներին,
- գեղագիտական ընկալման զարգացում,
- ստեղծագործականության խթանում,
- թիմային աշխատանքի փորձ,
- ինքնարտահայտման խթանում և այլն:

Անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և գիտաօժանդակ նյութեր - սեղաններ, փոքր գորգեր, թուղթ, մատիտ, մրգերի և բանջարեղենի մուլյաժներ և այլն:

Ներգրավված անձինք - կրթության մասնագետ, արվեստաբան:

Թանգարան – **Հայաստանի ազգային պատկերասրահ**

Ծրագրի անվանում – **«Սասունցի Դավիթ» (գրաֆիկա)**

Թիրախային լսարան – 5–12 տարեկան երեխաներ՝ մանկավարժի ուղեկցությամբ

Որտեղ – 20–րդ դարի հայ արվեստի ցուցասրահ, 4–րդ հարկում

Խումբ – 10–15 մասնակից

Տևողություն – 50–60 րոպե

Նկարագրություն – ծրագիրը ստեղծված է Հակոբ Կոջոյանի «Սասունցի Դավիթ» (1922թ.) ստեղծագործության շուրջ: Նպատակն է մասնակիցներին ծանոթացնել հայկական էպոսի ստեղծման պատմությանը, վերլուծել Սասունցի Դավթի կերպարը: Մասնակիցները ծանոթանում են նաև գրաֆիկայի տեխնիկային:

Ծրագրի ինտերակտիվ հատվածում մասնակիցներին տրամադրվում են նկարի դրվագները: Ծրագրավարը էպոսից ընթերցում է դրվագներին համապատասխան հատվածները: Մասնակիցները պետք է գուշակեն, թե որ դրվագին է վերաբերվում տվյալ տեքստը:



Նպատակ –

- թանգարանային մշակույթի դաստիարակում,
- ծանոթացում Հակոբ Կոջոյանի արվեստին,
- ծանոթացում գրաֆիկայի ժանրին,
- գեղագիտական ընկալման զարգացում,
- ազգային էպոսի նկատմամբ սիրո և ակնածանքի խթանում,
- ստեղծագործականության խթանում,
- թիմային աշխատանքի փորձ,
- ինքնարտահայտման խթանում և այլն:

Անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և գիտաօժանդակ նյութեր –

Ներգրավված անձինք – թանգարանային մանկավարժ, արվեստաբան:



ՈՒՍՈՒՑԻՉԸ՝ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Գաֆէսճեան արվեստի կենտրոն

Այսօր մանկավարժության կարևորագույն խնդիրներից են մարդու ստեղծագործական ունակությունների զարգացումը, անձնական կյանքում և մասնագիտական ոլորտում ոչ սովորական իրավիճակների ընկալումն ու հաղթահարումը: Դրանք թանգարաններին դրդեցին վերանայել գործունեության նպատակները, աշխատանքի ձևերն ու մեթոդները: Գիտակցելով, որ առանց դպրոցի և ուսուցչի հետ համագործակցելու թանգարանի ջանքերն էական արդյունք չեն ունենա, աշխարհի շատ թանգարաններում սկսեցին «պոտենցիալ դաշնակցի» (այդպես են բնորոշում ուսուցչին) վերապատրաստման ծրագրեր իրականացնել: Ուսուցչին թանգարանային կրթության մասնագետի օգնականի առաքելություն ընձեռելու գաղափարն առաջացել է 20-րդ դարի սկզբներին, քանի որ՝

1. ուսուցչից է կախված, թե թանգարանը որքանով կընդգրկվի դպրոցի ուսումնական գործընթացում՝ որպես դպրոցում ստացած գիտելիքները լրացնելու և զարգացնելու միջոց:

2. Ուսուցչի շնորհիվ թանգարանը կարող է դպրոցական լսարանի վրա առավել արդյունավետ ազդեցություն գործելու հնարավորություն ստանալ:

3. Քաջածանոթ լինելով աշակերտների գիտելիքների մակարդակին, կարողություններին և նախասիրություններին՝ վերապատրաստված ուսուցիչը կկարողանա ավելի բազմակողմանի ու արդյունավետ ներկայացնել թանգարանային հավաքածուների միջոցով ուսուցանվող թեմաները, քան թանգարանի աշխատակիցը:

4. Ուսուցչի վերապատրաստումն առավել շահավետ է նաև ֆինանսական առումով, քանի որ թանգարանից լրացուցիչ ծախսեր չի պահանջում:

Այսպիսով, թանգարանի և դպրոցական լսարանի միջև միջնորդ դարձած ուսուցչի վերապատրաստման շնորհիվ թանգարանը հնարավորություն է ստանում առավել համակողմանի և արդյունավետ իրականացնել աշակերտների հաղորդակցումը թանգարանային արժեքների հետ: Խնդրի առնչությամբ Բրիտանական թանգարանում ուսուցչին խորհուրդ է տրվում նախապես այցելել թանգարան՝ ծանոթանալու ցուցադրության հնարավորություններին, սրահների տեղադրությանն ու մատուցվող թեմաների հաջորդականությանը, որպեսզի ավելի ճիշտ պլանավորեն աշխատանքը: Թանգարանում ուսուցիչների վերապատրաստումը որակավորման բարձրացման և ինքնակրթության ձևերից է: Այդ առնչությամբ թանգարանն առաջարկում է.

1. տեղեկատվական-մեթոդական ծառայություն, որի շրջանակներում թանգարանի աշխատակիցներն ուսուցիչների համար հատուկ տեղեկատվական նյութեր են պատրաստում,

2. թանգարանային հավաքածուների ուսումնասիրության վերաբերյալ թեմատիկ դասընթացներ, որոնք կազմակերպվում են դպրոցական արձակուրդների ընթացքում՝ երկխոսության ու քննարկումների ձևով իրականացվող դասախոսությունների ու սեմինարների միջոցով,

3. թանգարաններում և որակավորման բարձրացման կենտրոններում ուսուցիչների և թանգարանի աշխատակիցների համատեղ կոնֆերանսների կազմակերպում:

ԱՄՆ-ի, Անգլիայի, Գերմանիայի և Ռուսաստանի թանգարաններում իրականացված փորձն ապացուցել է դրանց արդյունավետությունը դպրոցի և թանգարանի համագործակցության ընթացիկ և հեռանկարային հարցերի քննարկման, գեղարվեստական դաստիարակության կարևոր խնդիրների լուծման առումով:





Թանգարան – Արամ Խաչատրյանի տուն-թանգարան

Ծրագրի անվանում – «Դպրոցին հյուր»

Թիրախային լսարան – դպրոցականներ

Որտեղ – նախ՝ դպրոցում, ապա՝ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում

Խումբ – ըստ դասարանների

Տևողություն – դպրոցում՝ մեկ դասաժամ՝ 45 րոպե, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում՝ 1 ժամ 15 րոպե - 1 ժամ 30 րոպե

Նկարագրություն – ծրագիրն իրականացվում է չորս փուլով՝

1. կարիքների գնահատում, լսարանի ուսումնասիրություն (նախապատրաստական աշխատանք և քննարկում ուսուցիչների և դպրոցականների հետ): Ընտրվում է դպրոցը, դասարանը, հյուրընկալության օրը, ժամը: Համատեղ մշակվում է փոխադարձ այցելությունների գրաֆիկը:

2. Թանգարանի աշխատակիցների այցելություն դպրոցներ (ճանաչողական զրույց և նախնական տեղեկություններ թանգարանի և 20-րդ դարի երաժշտական մշակույթի մասին):

3. Դպրոցականների այցելություն տուն-թանգարան (հատուկ էքսկուրսիա, համերգ-զրույց և թեմատիկ հանդիպում համապատասխան արվեստագետների հետ):

4. Ծրագրի արդյունքների ամփոփում և երեխաների աշխատանքների ցուցահանդեսի շնորհանդես:

Ըստ վերը ներկայացվածի, այցելելով դպրոցներ, թանգարանի աշխատակիցները գիտաօժանդակ նյութերով, տեսաֆիլմով, ձայներիզներով երեխաներին են փոխանցում ընդհանուր ճանաչողական գիտելիքներ տուն-թանգարանի, Արամ Խաչատրյանի կյանքի և ստեղծագործության վե-





րաբերյալ: Նրանք փորձում են պարզել, թե արդյոք երեխաները լսում են դասական երաժշտություն, որքանով են ծանոթ կոմպոզիտորի ստեղծագործություններին, ներկայացնում են տուն-թանգարանը, նրա կառուցվածքը, գործունեությունը: Ցուցադրվում են Արամ Խաչատրյանի կյանքի տարբեր ժամանակաշրջաններն ընդգրկող լուսանկարներ, ինչպես նաև՝ հատվածներ նրա բալետներից: Երեխաներն ունկնդրում են հատվածներ Ա. Խաչատրյանի որևէ ստեղծագործությունից:

Հիմք ընդունելով կոմպոզիտորի կենսագրության որոշ մանրամասները, իր հոդվածներում, նամակներում արծարծած տեսակետները, մտորումներն ու հայացքները՝ թանգարանի աշխատակիցները երեխաների հետ զրուցում են մասնագիտական կողմնորոշման, ընկերության, բարության, պարտաճանաչության, սեփական անձի հանդեպ պահանջկոտության, դասական երաժշտություն լսելու անհրաժեշտության և այլ թեմաներով: Ընդ որում, հաշվի են առնվում դպրոցականների տարիքային առանձնահատկությունները: Թանգարան այցելությունը շահագրգռելու համար օգտագործվում են տարբեր հնարներ, օրինակ՝ երեխաներին ներկայացված թանգարանի որոշ ցուցանմուշների կամ Ա. Խաչատրյանի կյանքի որոշ դրվագների մասին պատմությունները կիսատ են թողնվում՝ նշելով, որ շարունակությունը կարող են լսել այն ժամանակ, երբ կայցելեն թանգարան:

Ծրագրի հաջորդ փուլում աշակերտներն են այցելում տուն-թանգարան (միաժամանակ այցելում է մոտ 150 աշակերտ՝ կապված թանգարանի համերգասրահի տարածքային հնարավորությունների հետ): Աշակերտները հինգ տարբեր խմբերով ծանոթանում են մշտական ցուցադրությանը (ըստ հատուկ այս ծրագրի համար մշակված էքսկուրսիոն տեքստի), ապա մասնակցում նրանց

համար կազմակերպված ճանաչողական բնույթի համերգ-զրույցներին, նշանավոր արվեստագետների հետ ինտերակտիվ հանդիպումներին և այլն: Հանդիպման վերջում դպրոցականներին հանձնարարվում է իրենց տպավորությունները, կարծիքները, մտորումները, զգացողությունները ներկայացնել տուն-թանգարան՝ շարադրությունների, նկարչական կամ ձեռքի այլևայլ աշխատանքների տեսքով:

Ծրագիրն ամփոփվում է հաջորդ ուսումնական տարվա սկզբին՝ թանգարանում: Կազմակերպվում է «Համերգ լավագույններով»՝ ծրագրին մասնակցած շնորհալի աշակերտների ուժերով: Ակտիվ մասնակցություն ցուցաբերած աշակերտները, լավագույն շարադրությունների և նկարչական աշխատանքների հեղինակները խրախուսվում են հուշանվերներով: Նրանց աշխատանքների հիման վրա, հենց երեխաների ուժերով, կազմակերպվում է ժամանակավոր ցուցահանդես:

Նպատակ -

- տուն-թանգարանի ցուցադրության և հավաքածուների միջոցով դպրոցականներին ծանոթացնել Արամ Խաչատրյանի կյանքին և ստեղծագործական ուղուն,
- նպաստել աշակերտների գեղագիտական ճաշակի ձևավորմանը,
- հետաքրքրություն առաջացնել դասական երաժշտության հանդեպ:

Ծրագիրն ուղղված է դպրոցականների մտահորիզոնի ընդլայնմանը, երաժշտական դաստիարակությանը:

Անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և գիտաօժանդակ նյութեր - համակարգչային տեխնիկա, էկրան, պրոյեկտոր, տպագիր նյութեր, տեսաֆիլմեր, ձայներիզներ:

Ներգրավված անձինք - գիտաշխատողներ, ուսուցիչներ:

Ակնկալվող և իրական արդյունք - Ծրագիրը համալրում և բազմակողմանի է դարձնում դպրոցական դասընթացը, երաժշտական դաստիարակության միջոցով նպաստում է ներդաշնակ հոգեկերտվածքով անհատների ձևավորմանը: Մասնակիցները ձեռք են բերում ինքնուրույն ցուցահանդես կազմակերպելու փորձառություն: Ծրագիրն օգնում է հատկապես հեռավոր մարզերում, կոնֆլիկտային գոտիներում բնակվող երեխաներին, որոնք հիմնականում սոցիալապես անապահով են և կտրված են մշակութային կյանքից, ազատվելու անտեսվածության և անլիարժեքության բարդույթներից: Ծրագիրն ապահովում է այցելությունների պարբերականությունը (լսարանի ընդլայնում, տարբեր շերտերի ներմուծում, մշտական լսարանի ձևավորում): Այն սերտացնում է թանգարան-դպրոց կապը:



Թանգարան – **Արամ Խաչատրյանի տուն-թանգարան**

Ծրագրի անվանում – **«Ես դիրիժոր եմ»**

Թիրախային լսարան – 6-12 տարեկան երեխաներ

Որտեղ – Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի ցուցասրահներից մեկում, համերգային դահլիճում

Խումբ – 15 մասնակից

Տևողություն– առավելագույնը՝ 1ժամ 15 րոպե

Նկարագրություն – ծրագրի հիմքում անվանի կոմպոզիտորի դիրիժորական գործունեությունն է: Երեխաների հետ հանդիպումը սկսվում է հենց այս սրահից, որտեղ նրանք ծանոթանում են Արամ Խաչատրյանի դիրիժորական գործունեությանը, նրա այն անձնական իրերին, որոնք նա կրել է համերգային կատարումների ժամանակ, և իհարկե, դիրիժորական փայտիկին: Ապա երեխաների համար աննկատ անցում է կատարվում դեպի ինտերակտիվ հաղորդակցություն: Դիրիժորական փայտիկը համեմատվում է կախարդական փայտիկի հետ*: Ահա այս համեմատությունն օգտագործելով՝ երեխաների հետ զրույցն ընթանում է դիրիժորին համեմատելով հրաշագործի հետ: Երեխաները հիշում են հրաշագործների՝ իրենց ծանոթ մուլտֆիլմերից, հեքիաթներից: Այնուհետև ծրագիրը շարունակվում է թանգարանի դահլիճում նախօրոք նրանց համար պատրաստած սեղանների շուրջ: Ծրագրի վարողը ծանոթացնում է դիրիժորի մասնագիտությանը, պատմում նրա գործունեության, նվագախումբն ու երգչախումբը ղեկավարելու միջոցների և ձևերի մասին: Ապա անցնում է ուսուցողական խաղի: Երեխաներից յուրաքանչյուրը դառնում է կամ որևէ, նոտա, կամ որևէ երաժշտական

* Դիրիժորական փայտիկը կախարդական փայտիկ էր անվանել դպրոցահասակ այցելուներից մեկը, երբ շարադրության մեջ գրել էր. «Ինձ ամենից շատ դուր եկավ կախարդական փայտիկը»: Նա, իհարկե, նկատի էր ունեցել դիրիժորական փայտիկը:

գործիք: Նրանցից մեկը հանդես է գալիս դիրիժորի դերում և փորձում է արդեն սովորած մեթոդներով ղեկավարել ստեղծված նվագախումբը: Այստեղ երեխան ինքնուրույն պիտի հանդես գա, պիտի կարողանա որոշում կայացնել և ղեկավարել մյուսներին: Խաղը շատ է աշխուժացնում երեխաներին, նրանք ավելի շփվող ու համարձակ են դառնում: Այնուհետև վարողը պատմում է երաժշտության կատարման չափի, տեմպի մասին՝ օգտագործելով նախօրոք պատրաստված գծապատկերները: Երեխաները լսում են ամեն մեկին համապատասխան ստեղծագործությունը և դարձյալ փորձում են ղեկավարել ենթադրյալ նվագախումբը: Երեխաներին ակտիվացնում է նաև ¾ չափով գրված Արամ Խաչատրյանի վալսը, որի ժամանակ նրանք պարում են: Ծրագիրն ավարտվում է «Հրաշագործի աշակերտը» մուլտֆիլմի դիտումով:

Նպատակ -

- Ա. Խաչատրյանի դիրիժորական գործունեության օրինակով՝ մասնակիցներին ծանոթացնել դիրիժորի մասնագիտությանը,
- հնարավորություն ստեղծել ինքնադրսևորվելու, հանդես գալու դիրիժորի դերում:

Անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և գիտաօժանդակ նյութեր - հեռուստացույց, DVD, CD նվագարկիչներ, տպագիր նյութեր, գրենական պիտույքներ:

Ներգրավված անձինք - գիտաշխատողներ:



ՈՒՍՈՒՑԻՉ – ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ԵՎ ԱՄՆ-ՈՒՄ

Արդեն XIX դարի վերջին ուսուցչի հետ իրականացվող աշխատանքին հատուկ կարևորություն էր տրվում Գերմանիայի, ԱՄՆ-ի թանգարաններում: Թանգարանի և դպրոցի համագործակցությունը Գերմանիայում կառուցվում է ուսման գործընթացում հնարավոր խնդիրները հաղթահարելու ճանապարհին ուսուցչին լրացուցիչ օգնություն մատուցելու վրա: Ուսուցիչը թանգարանում հանդես է գալիս որպես «փորձագետ», իր մասնագիտական գործառույթները համալրում է թանգարանի ընձեռած միջոցներով ու բովանդակությամբ՝ հընթացս կառավարելով աշակերտի վարքն ու գիտելիքները: Թանգարանում կարևոր տեղ է հատկացվում դպրոցականների ինքնուրույն աշխատանքի ղեկավարման մեթոդներին: Այդ նպատակով տարբեր տարիքի երեխաների համար հատուկ «աշխատանքային տետրեր» են կազմվում: Դրանք յուրօրինակ չափով, ձևով, հետաքրքիր առաջադրանքներով պատկերազարդ տետրեր են, որ կիրառվում են թանգարանի ցուցադրության տարածքում

աշխատելիս: Տետրի թեմատիկ բովանդակությունը համահունչ է դպրոցական ծրագրին, որն ուսուցչին և թանգարանային մանկավարժին հնարավորություն է տալիս խորացնել և ընդլայնել երեխաների գիտելիքներն ու հմտությունները որոշակի թեմաների վերաբերյալ: Որպես կանոն, «աշխատանքային տետրը» կազմում է թանգարանի աշխատակիցը՝ ուսուցչի հետ խորհրդակցելով: Տետրը եռամաս է, որոնցից առաջինը պարապմունքների ընթացքում օգտագործվող թանգարանային արժեքների մասին կարճ տեղեկություններ է պարունակում, իսկ մյուս երկուսը միտված են ուսուցչի և աշակերտի համատեղ աշխատանքին: Տետրում ներկայացվող առաջադրանքները կատարելով՝ աշակերտը խորացնում է դպրոցում ստացած գիտելիքները: «Աշխատանքային տետրի» մյուս գործառույթը ուսուցչին օգնելու նպատակ ունի՝ յուրացնելու թանգարանային ցուցադրության լեզուն և գնահատելու թանգարանային բնօրինակներն ըստ պատմական կամ գեղարվեստական նշանակության: Դրանք շատ կարևոր են դպրոցականի մոտ թանգարանային մշակույթի ձևավորման համար: Ընդհանուր առմամբ՝ «աշխատանքային տետրերի» նշանակությունը կրթադաստիարակչական գործընթացում

- օգնում է կենտրոնացնել ուշադրությունը թանգարանային կրթության մասնագետի կողմից ընտրված արժեքների վրա և նպաստում ուղղորդող հարցերի միջոցով ուսումնասիրել դրանք,
- նպաստում է թանգարանում ներկայացվող մշակութային ժառանգության արժևորմանը,
- աշակերտին մղում է ստեղծագործական գործունեության՝ այն խթանելու տարբեր միջոցներ օգտագործելով,
- ձևավորում է տարածաժամանակային պատկերացումներ՝ օգտագործելով հուշարձանների համեմատության վերլուծության մեթոդները:

Այսպիսով, Գերմանիայում թանգարան-դպրոց համագործակցությունը կազմակերպվում է թանգարանի գործունեությունը դպրոցական կրթական ծրագրերին ներդաշնակ կառուցելու և ուսուցչի օգնությամբ թանգարանային նյութը սովորողներին առավել համակողմանի ու մատչելի ներկայացնելու միջոցով: Այս փոխգործունեության յուրօրինակ հայտնությունը «աշխատանքային տետրերի» ստեղծումն ու կիրառումն է, որը միտված է զարգացնելու դպրոցականների թանգարանային ուղղվածությունը: Այսուհանդերձ, հիմնականում հենվելով արվեստանոցային և անհատական աշխատանքի ձևերի և աշխատակիցների հեղինակային մեթոդների վրա, Գերմանիայի գեղարվեստական թանգարանները սովորողների գեղարվեստական ընկալումը հետևողականորեն զարգացնող համալիր ծրագրեր չեն իրականացնում:

Ի տարբերություն դրա՝ ԱՄՆ-ում կրթական գործունեության տեսության և պրակտիկայի զարգացումն ավելի հետևողական է, և թանգարան-դպրոց փոխհարաբերությունները

պետական քաղաքականության մակարդակով են կազմակերպվում: Դեռևս XX դարի սկզբին դպրոցի ու թանգարանի միջև գործընկերական հարաբերություններ հաստատվեցին, որտեղ թանգարանին առաջատար դեր էր հատկացվում: Ու թեև այս երկրի թանգարաններն ուսումնական հաստատությունների պաշտոնական կարգավիճակ ունեն, գեղարվեստական թանգարանների կապը դպրոցների հետ կազմակերպելը հեշտ չէր: Խնդիրը դպրոցների ուղղվածությունն էր դեպի տեխնոլոգիական առաջխաղացումը, որի պատճառով հումանիտար առարկաների ուսուցման մեջ լուրջ թերություններ էին նկատվում: Խնդրի լուծմանը միտված աշխատանքը զգալիորեն աշխուժացրեց դպրոցի և թանգարանի հետաքրքրությունների մերձեցման գործընթացը և կրթական եղանակների ու միջոցների նոր զինանոց ձևավորեց: Ըստ այդմ՝ թանգարանն ուսուցիչներին առաջարկում էր բազմարնույթ շրջայցերի, մասնագիտացված արվեստանոցների, համերգների, դիդակտիկ ցուցահանդեսների միջոցով կազմված կրթական ծրագրեր: Դրանց հիմքում ընկած էր այն թեզը, որ թանգարան այցելելն աշակերտի կյանքի մի դրվագ է, ուստի թանգարանային նյութը դպրոցական ծրագրերի հետ համաձայնեցնելու և արդյունավետ իրականացնելու խնդիրն առավելապես ուսուցչի ունակությունից, քան թանգարանի աշխատողի վարպետությունից է կախված: Թանգարանում ուսուցչին ինքնուրույն աշխատանքի պատրաստելը հետևյալ դրույթներով է հիմնավորվում.

- թանգարանն ուսուցչի միջոցով մանուկներին լայն լսարանի վրա ազդելու հնարավորություն է, ստանում՝ միաժամանակ խնայելով ֆինանսական միջոցները,
- մանկավարժական հմտությունների շնորհիվ ուսուցիչը կարող է դպրոցականին ավելի արդյունավետ նախապատրաստել՝ ընկալելու թանգարանում ներկայացվող գեղարվեստական հավաքածուները,
- ծանոթ լինելով աշակերտների հումանիտար մակարդակին՝ ուսուցիչն առավել մեծ հնարավորություն ունի խթանելու սաների մեջ գեղարվեստական մշակույթի ձևավորման գործընթացը,
- թանգարանային կրթության մասնագետը հնարավորություն է ստանում կենտրոնանալու հատուկ ծրագրերի մշակման վրա, որոնք նախատեսվում են աշխատանքն իրականացնել թե՛ թանգարանում և թե՛ դպրոցում:

Այս գործընթացին լայն աջակցություն են ցուցաբերում և՛ պետական, և՛ հասարակական կազմակերպությունները, քանի որ այն նպաստում է կրթության համակարգում դրական փոփոխությունների կայացմանը: Այդ առումով ամերիկյան թանգարանների մեծ մասն ուսուցիչների գեղարվեստական մշակույթի զարգացման և տարբեր ուղղվածության թանգարաններում նրանց աշխատել պատրաստելու ծրագրեր է մշակում: Դրանց հիմքում

ընկած է այն գաղափարը, որ ուսուցումը հետազոտությունների, փորձերի և բացահայտումների գործընթաց է: Հատկապես մեծ համարում է վայելում Սմիթսոնյան ինստիտուտի թանգարանների Տեղեկատվական-մեթոդական կենտրոնի գործունեությունը, որի կազմում տարբեր ուղղվածության թանգարաններ են ընդգրկված: Ինստիտուտը հրատարակում է ուսումնական ձեռնարկներ և գիտության տարբեր բնագավառների վերաբերյալ մեթոդական գրականություն: Հաճախ այդ ծրագրերը ստեղծվում և կիրառվում են որպես դպրոցական տվյալ դասընթացի պարտադիր բաղկացուցիչ: Ինստիտուտում ուսուցիչների համար դասընթացներ են կազմակերպվում, որոնք ներառում են նաև պարապմունքներն իրականացնելու մեթոդական մշակումներ: Կազմված տեղեկատվական նյութերի փաթեթները և ուսուցչին տրվող մեթոդական ձեռնարկները («ուսուցչական փաթեթ») դյուրացնում են դպրոցական դասերի անցկացումը: Այդ ձեռնարկներն ընդգրկում են մեթոդական խորհուրդներ, տարբեր սխեմաներ և աղյուսակներ, ձայնագրություններ, տեսանյութեր, լուսապատկերներ: ԱՄՆ-ի գեղարվեստական թանգարանների շրջանում այդ «ուսուցչական փաթեթների» պատրաստման առաջատարը Վաշինգտոնի ազգային պատկերասրահն է, որը կրթական գործընթացում կերպարվեստի ներուժը բացահայտելու նպատակով ակտիվորեն և համակարգված օգտագործում է նշված միջոցների ողջ զինանոցը: Այդ շարքում են կերպարվեստի տեսակների և տեխնիկաների, զարգացման ժամանակաշրջանների, ինչպես նաև համաշխարհային արվեստի վարպետների մասին մենագրությունները: Ուսուցիչների վերապատրաստումն իրականացվում է «Մանկավարժական ինստիտուտ» կոչվող տեղեկատվական-մեթոդական կենտրոնում: Այդ գործում մեծ է թանգարանային գրադարանների դերը: ԱՄՆ-ի բոլոր խոշոր թանգարաններն ունեն հարուստ գրադարաններ: Ուսուցիչները, թանգարանային կրթության մասնագետները և օգնականները՝ թանգարանի կամավորները, այստեղ պարապմունքներին նախապատրաստվելու և խորհրդատվություն ստանալու հնարավորություն ունեն:

ԱՄՆ-ում շատ ընդունված է կրթական ծրագրերն իրականացնելիս ընդգրկել նաև կամավորների: Կամավորներ կարող են դառնալ տարբեր մասնագիտությունների և տարիքի անձինք: Նրանց գործառույթները բազմազան են՝ դպրոցականների թանգարան այցելությունը կազմակերպելուց մինչև թանգարանի տարբեր օղակներում և տեղեկատվական ծառայություններում աշխատելը: Գեղարվեստական թանգարանների կրթական ծառայություններում աշխատում են հումանիտար կրթությամբ կամավորները, որոնց թվում շատ են կյանքի մեծ փորձ ունեցող թոշակառուները: Տարիքային հոգեբանության, արվեստի պատմության և գեղարվեստական թանգարանի առանձնահատկությունների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելուց և որոշարկված գործունեության ուղղությամբ

վերապատրաստվելուց հետո կամավորներն սկսում են շրջայցեր վարել նշված ծրագրերի շրջանակներում՝ անվճար հիմունքներով կամ շատ համեստ վարձատրությամբ:

Կրթական գործընթացներում կամավորների ընդգրկումը միտված չէ միայն թանգարանային միջոցների խնայմանը: Շաբաթը մի քանի աշխատանքային ժամ ծանրաբեռնվածությամբ՝ նրանք թանգարաններին անգնահատելի օգնություն են տալիս՝ նոր դպրոցականների ներգրավելով ու կրթելով, որը վկայում է թանգարանային գործում կամավորներին ընդգրկելու անհրաժեշտությունը:



Թանգարան – **Երևան քաղաքի պատմության թանգարան**

Ծրագրի անվանում – **«Ճանաչիր Երևանը» խաղ-շրջայց**

Թիրախային լսարան – դպրոցականներ, առաջին-երկրորդ կուրսի ուսանողներ

Որտեղ – թանգարանի առաջին սրահում, 20-րդ դարասկզբի Երևանի մանրակերտի շուրջ

Խումբ – 12-40 մասնակից

Տևողությունը – 40-60 րոպե

Նկարագրություն – խաղի կենտրոնում 20-րդ դարասկզբի Երևանի մանրակերտն է (հեղինակ՝ Պ. Գրիգորյան), որի շուրջն էլ կատարվում է վիրտուալ զբոսանք հին Երևանով: Սկզբում շրջավարը ներկայացնում է Երևանի պատմական կենտրոնը՝ թաղերը, փողոցները, այգիները, հրապարակները, գլխավոր շուկան, եկեղեցիները, կարևոր կառույցները, բացի այդ պատմում հետաքրքիր տեղեկություններ քաղաքի պատմությունից, որից հետո մասնակիցները բաժանվում են երկու թիմի՝ **«Էրեբունի»** և **«Երևան»**: Խաղն ընթանում է վիկտորինայի ձևով՝ յուրաքանչյուր մասնակցին տրվում է մեկական հարց, իսկ վերջում կատարվում է թիմային աշխատանք՝ մրցող թիմերը լուծում են խաչբառ: Միավորների (միավորի վրա պատկերված է Երևանի գինանշանը) քանակով որոշվում է հաղթող թիմը, որն էլ ստանում է «ՇՆՈՐՀԱՎԱԼԱԳԻՐ»:

Նպատակ –

- ծանոթացնել դպրոցականներին և ուսանողներին Երևանի պատմական անցյալին,
- դաստիարակել մայրաքաղաքը սիրող քաղաքացիներ,
- զարգացնել մասնակիցների ուշադրությունը, արագ և ճշգրիտ պատասխան ձևակերպելու ունակությունը,
- ներգրավվել թիմային աշխատանքի մեջ,
- թանգարան այցելությունը դարձնել ոչ միայն կրթության, այլ նաև հաճելի ժամանց անցկացնելու վայր:



Անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և գիտաօժանդակ նյութեր – քարտի ձևով միավորներ, խաչբառեր, շնորհակալագրեր:

Ներգրավված անձինք – շրջավար:



ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԱԽԱԳԾԵՐ

Գաֆէսճեան արվեստի կենտրոն

Թանգարանները կարևորագույն ոչ-ֆորմալ ուսումնառության հաստատություններ են ոչ միայն երեխաների, դպրոցականների և ուսանողների, այլև շարունակական կրթության կենտրոններ՝ մեծահասակ այցելուների համար: Օժտված լինելով կրթական մեծ ներուժով՝ թանգարանը կարող է մեծահասակների տարբեր խմբերին առաջարկել կրթական բազմազան հնարավորություններ: Թիրախային այցելուների շարքում կարող են լինել ընտանիքներ, երիտասարդներ, տարեցներ, ինչպես նաև կորպորատիվ խմբեր, որոնք տարբերվում են իրենց սոցիալական և մշակութային կարիքներով և նախասիրություններով: Այդ է պատճառը, որ այս բազմաշերտ խմբի հետ աշխատելու համար խիստ կարևոր է լսարանի ուսումնասիրությունը, կարիքների գնահատումը, հաղորդակցության և աշխատաձևերի համարժեք ընտրությունը:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՄԲԵՐ

Ընտանիքը թանգարանային լսարանի կարևոր շահառուներից է, ուստի պետք է լուրջ ուշադրություն դարձնել ընտանիքներին թանգարանային կյանքում ներգրավելուն միտված ծրագրերի կազմակերպմանը: «Շարունակական կրթությունը թանգարաններում» եվրոպական ձեռնարկում ընտանիքը սահմանվում է որպես տարբեր սերունդների մարդկանց խումբ, որը թանգարան է այցելել առնվազն մեկ երեխայի ուղեկցությամբ:

Ընտանեկան խմբերի հետ աշխատելիս կարևորվում է թանգարանային կրթության մասնագետի հաղորդակցային հմտությունները, մասնավորապես՝ ջերմ ընդունելությունը, հարգալից և արդյունավետ փոխշփումը մեծահասակների հետ: Կարևոր դեր ունի նաև նրանց նախասիրությունների գնահատումը՝ որպես տարբեր մշակույթների կամ սոցիալական խմբերի ներկայացուցիչներ, տարբեր տարիքի երեխաների զարգացման հնարավորությունների ճիշտ գնահատումը, ծրագրի ընթացքում մեծահասակների դերի հստակ պլանավորումը:

Բոստոնի և Չիկագոյի մանկական թանգարանների համատեղ իրականացված «Սովորում ենք միասին. ընտանիքները թանգարանում» հետազոտական ձեռնարկում հեղինակներն առանձնացնում են ներգրավման տաս հիմնական սկզբունք, որոնք կարևոր են ընտանեկան խմբերի հետ աշխատանքի կազմակերպման և արդյունավետ հաղորդակցման տեսանկյունից:

1. Կրթության հյուրընկալ մասնագետներ

Թանգարանային հաղորդակցման ընթացքում կիրառվող պատշաճ վարվելակարգի և խոսքի (ժեստեր, ժպիտ, բարեհամբույր վերաբերմունք, վստահ և ընկալելի խոսք և այլն) շնորհիվ կրթության մասնագետը կվաստակի այցելուների վստահությունը՝ թանգարանի ցուցադրությանն ու ծրագրերին քաջատեղյակ լինելու հարցում:

2. Ժամանց

Աշխույժ միջավայրը, որը կնպաստի այցելուների հաճելի ժամանցի ապահովմանը:

3. Հյուրընկալ միջավայր

Թանգարանի ֆիզիկական միջավայրը հարմարավետ է և գրավիչ թե՛ մեծահասակների, թե՛ երեխաների համար:

4. Մեծահասակ–երեխա կապի խթանում

5. Հարգանք ընտանիքների մշակութային կողմնորոշման նկատմամբ, որը կարող է տարբեր լինել իր կարիքներով, դրվածքով, ավանդույթներով:

6. Խաղի և ուսումնառության արդյունավետ համադրում

Երեխաների և նրանց խնամակալների համար մշակվում են դրական լիցքերով լի կրթական, ստեղծագործ և բարեկիրթ աշխատաձևեր:

7. Խաղ և ուսումնառություն բոլորի համար

Անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր անհատ երեխայի և մեծահասակի ճանաչողական, ֆիզիկական, մշակութային և սոցիալական տարբերությունները:

8. Սովորելը դարձնել շոշափելի

Հնարավորություն ստեղծել ընտանիքներին քննարկել իրենց ստացած գիտելիքը, տեղեկությունները և թանգարանային փորձը:

9. Ուսումնառությունը թանգարանից դուրս

Մշակել համապատասխան միջոցներ (ստեղծագործական նյութեր, գաղափարներ, աշխատանքային տետրեր), որոնք ձեռք բերված թանգարանային փորձը շարունակելի կդարձնեն նաև թանգարանի սահմաններից դուրս:

10. Արտացոլվող գործունեություն

Ենթադրում է մասնագիտական շարունակական զարգացման գործընթաց, որը ներառում է, ձեռքբերումների և մարտահրավերների գնահատում, նպատակների կատարելագործում: Ընտանեկան ծրագրերը մշակելիս կարևոր է ծրագրերի ինտերակտիվ միջավայրը և բնույթը, որոնք առավել նպատակաուղղված և արդյունավետ են դարձնում այցը՝ նպաստելով սոցիալական կապերի ամրապնդմանը, գիտելիքի համատեղ յուրացմանը և փոխանակմանը: Ինչպես նաև անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ծրագրերի իրականացման ժամանակին, օրինակ՝ դրանք կազմակերպել արձակուրդներին կամ հանգստյան օրերին: Առաջարկվող ուսումնական հնարավորություններից զատ՝ ընտանեկան ծրագրերը կարևոր են համայնքի կյանքում ընտանիքների սոցիալական դերի մեծացման, միջընտանեկան կապերի ամրապնդման համար: Բացի այդ, ընտանեկան այցերը կարող են խթանել երեխաների ֆորմալ կրթությանը և նոր հմտությունների ձեռք բերմանը, նպաստել, որ մասնակից երեխաները հետագայում էլ ներգրավված լինեն թանգարանի շարունակական կրթության մեջ:







Թանգարան – **Գաֆէսճեան արվեստի կենտրոն (ԳԱԿ)**

Ծրագրի անվանում – **«Ճանապարհորդություն գույների աշխարհով»**

Թիրախային լսարան – ընտանիքներ՝ 7 տարեկանից բարձր երեխաների մասնակցությամբ

Որտեղ – «Արծիվ» սրահում, Ստեղծագործական սրահում

Խումբ – առավելագույնը 20 մասնակից

Տևողություն – 1, 5 ժամ:

Նկարագրություն – ծրագիրն անց է, կացվում կենտրոնի «Հարություն Կալենց. գույնը ձևի մեջ» ժամանակավոր ցուցադրության հիման վրա:

Ծրագրի առաջին մասում մասնակիցները ցուցասրահում ծանոթանում են Հարություն Կալենցի կենսագրությանն ու ստեղծագործություններին:

Ծրագրի երկրորդ մասը շարունակվում է կենտրոնի Ստեղծագործական սրահում: Մինչև բուն ստեղծագործական մասին անցնելը ցուցադրվում է տեսանյութ «Ֆովիզմ» արվեստի ուղղության և գույնի տեսության մասին՝ հղումներ անելով Հարություն Կալենցի արվեստում գույնի կիրառման կարևորությանը:

Ծրագրի վերջում մասնակից ընտանիքները ստեղծում են իրենց ֆովիստական աշխատանքները:

Նպատակ –

- հաղորդակցություն Հարություն Կալենցի արվեստին,
- ծանոթացում ֆովիզմ ուղղության հետ,
- երեխաների երևակայության խթանում,
- ընտանիք-թանգարան կապի ամրապնդում,
- արվեստի և ստեղծագործականության միջոցով ներընտանեկան կապերի վերարժևորում:

Անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և գիտաօժանդակ նյութեր – թեմատիկ տեսանյութ ֆովիզմի մասին, մոլբերտ, թուղթ, գուաշ, վրձին, ջրաման:

Ներգրավված անձինք – կրթական ծրագրերի համակարգող, թանգարանի գիտական անձնակազմ:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Երիտասարդները (14–22 տարեկաններ) թանգարանի կարևորագույն, միևնույն ժամանակ դժվար ներգրավվող թիրախային խմբերից են: Նրանց որոշ չափով բնորոշ են ուշ դպրոցական տարիքի բնավորության գծերը: Դրանք բարդ են սոցիալական, կենցաղային սովորույթների, արժեքային համակարգերի, հոգեբանության տարբերությունների պատճառով: Երիտասարդների այցերը խթանելու և շարունակականություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել այն աշխատաձևերը, որոնք հնարավորություն կտան երիտասարդներին կառուցողական ներգրավվածություն ունենալ թանգարանի կրթամշակութային գործունեության մեջ: Օրինակ՝ ծրագրերի նախագծման, ցուցադրությունների կազմակերպման, տարբեր կամավորական աշխատանքների մեջ ներգրավելու մեջ, որը միաժամանակ բարենպաստ ազդեցություն կունենա նրանց հանրային և մշակութային դերի բարձրացման տեսանկյունից: Այս տարիքում աճում է հետաքրքրությունն ուսումնական գործընթացի նկատմամբ, ավելի հաճախակի են դառնում ինքնուրույն հետազոտական աշխատանքները, որի հետևանքով մտածողությունն ավելի անկախ և ստեղծագործական բնույթ է ստանում: Երիտասարդներին թանգարանային գործունեության մեջ ներգրավելու հիմնական դրդապատճառների մեջ կարելի է դիտարկել՝

- նոր գիտելիքների, հմտությունների և փորձառության ձեռքբերում,
- մասնագիտական գիտելիքների և որակավորման ընդլայնում,
- անհատականության կայացում և ինքնադրսևորում,
- աշխատանքային փորձի ձեռքբերում,
- ընդհանուր կենսամակարդակի բարձրացում,
- սոցիալական շփում,
- հաճելի ժամանցի կազմակերպում
- և այլն:

Երիտասարդների համար ծրագրեր կազմելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նորագույն տեխնոլոգիաների կիրառմանը, որոնք առավել գրավիչ և արդյունավետ կդարձնեն նրանց ներգրավվածությունը թե՛ իրենց, թե՛ թանգարանի համար: Երիտասարդների մեջ առանձին խմբով կարելի է դիտարկել ուսանողների լսարանը: Ձգտելով հասկանալ շրջակա աշխարհի բարդությունները՝ ուսանողները հաճախ են իրենց հուզող հարցերի պատասխանները փնտրում արվեստի մեջ: Քանի որ այցելուների շրջանում մեծ թիվ են կազմում ուսանողները՝ թանգարանի կրթավարը պետք է ուշադրություն դարձնի նրանց տարիքային-հոգեբա-

նական առանձնահատկություններին և նյութի ներկայացման ընթացքում համապատասխան մեթոդներ կիրառի: Ուսանողական լսարանի համար կազմակերպվող շրջայցի ժամանակ պետք է նյութը մատուցելիս հաշվի առնել երեք հիմնական գործոն՝ մտավոր ներուժի զարգացում, զգայականություն, թանգարանային արժեքների նկատմամբ լրջմիտ վերաբերմունք: Աշխատանքի բնույթը կարող է փոփոխվել՝ այցելուների խմբի ինտելեկտուալ մակարդակին և տարիքին համապատասխան: Դիտարկելով ուսանողների խումբը որպես թանգարանի հիմնական այցելուներ՝ կարևոր է հիշել, որ այդ տարիքը համարվում է գեղագիտական զգացումների զարգացման, բնավորության կայունացման և հիմնավորման շրջան: Այս տարիքի ներկայացուցիչներն ունեն սոցիալական անհատի լիովին ձևավորված զգայական համակարգ, ներառյալ քաղաքացիական, սոցիալ-քաղաքական, մասնագիտական աշխատանքային գործոնները: Թանգարանի կրթական գործունեությունը հնարավորություն է ընձեռում ընդլայնել նրանց աշխարհայացքը, ընդհանուր գիտելիքներ է հաղորդում մշակույթի վերաբերյալ և գեղարվեստական ստեղծագործությունների վերլուծության հմտություններ ձևավորում: Ըստ վերը նշվածի՝ ուսանողներն ավելի հակված են կիրառական արվեստի կամ որևէ նկարչի կյանքին և ստեղծագործությանը նվիրված թեմատիկ շրջայցերին, որը վկայում է համակարգված գիտելիքներ ստանալու նրանց պահանջի մասին: Ինչպես նշեցինք, ուսանողների հետ աշխատելիս անհրաժեշտ է նախապես ճշտել խմբի ինտելեկտուալ մակարդակն ու պատրաստվածությունը, ստեղծել համատեղ մտավոր աշխատանքի մթնոլորտ, որը պահանջում է մտավոր և հուզական լարվածություն, մեծացնում և խորացնում է գիտելիքների և գեղագիտական պատկերացումների շրջանակը: Հարկ է նշել նաև, որ շրջայց-պարապմունքները ուսանողին հնարավորություն են տալիս

- հաղորդակցվել բնօրինակներին,
- ապահովել գեղարվեստական վերլուծության սկզբունքների իմացությունն ու դրանց կիրառումը կյանքի ընթացքում,
- սովորել կիրառական արվեստի ստեղծագործությունների գեղարվեստական-կերպարային լուծումների սկզբունքները,
- թանգարանը ուսանողներին կարող է առաջարկել հնարավորությունների բավականին լայն շրջանակ՝ մասնակցելու որոնման, հետազոտական, ֆոնդային, կրթական գործերում:

Այս ամենն, իհարկե, մեծացնում է հետաքրքրությունը թանգարանի հանդեպ և մղում նրանց նորից ու նորից այցելել ու մասնակցել տարբեր ծրագրերի ու միջոցառումների:







Թանգարան – **Գաֆէսճեան արվեստի կենտրոն (ԳԱԿ)**

Ծրագրի անվանում – «**Քաղաք «Հունդերթվասեր»**

Թիրախային լսարան – մեծահասակներ՝ 15–24 տարեկան երիտասարդներ

Որտեղ – «Սասունցի Դավիթ» պարտեզի սրահում, Ստեղծագործական սրահում

Խումբ – առավելագույնը 15 մասնակից

Տևողություն – 1, 5 ժամ

Նկարագրություն –

«Քաղաք «Հունդերթվասեր» ծրագիրը կազմակերպվել է Ֆրիդենսբայխ Հունդերթվասերի «Ռեգենթագ» ցուցադրության հիման վրա: Ծրագրի առաջին մասում մասնակիցները ցուցասրահում ծանոթանում են ավստրիացի նկարիչ, ճարտարապետ, բնապահպան Ֆրիդենսբայխ Հունդերթվասերի ստեղծագործություններին, նրա հիմնական գաղափարներին և նկարչական ու ճարտարապետական ոճին:

Ծրագրի երկրորդ մասը շարունակվում է կենտրոնի Ստեղծագործական սրահում, որտեղ ցուցադրվում է տեսանյութ Հունդերթվասերի հիմնական ճարտարապետական կառույցների մասին: Հաջորդիվ, ծրագրին ներգրավված ճարտարապետների օգնությամբ մասնակիցները համապատասխան նյութերով ստեղծում են «Քաղաք Հունդերթվասեր»-ի իրենց մանրակերտը՝ որպես հիմք ընդունելով Երևան քաղաքի շենքերից մեկը, օգտագործելով Հունդերթվասերի հիմնական ճարտարապետական գաղափարներն ու փիլիսոփայությունը:

Նպատակ –

- Ֆրիդենսբայխ Հունդերթվասերի ստեղծագործությունների, նրա հիմնական գաղափարների և նկարչական ու ճարտարապետական ոճի ծանոթացում,







- արդի քաղաքաշինական և բնապահպանական խնդիրների ներկայացում և քննարկում,
- ստեղծագործականության և երևակայության խթանում
- թիմային հմտությունների զարգացում,
- թանգարանի՝ որպես կրթական միջավայրի հաստատում:

Անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և գիտաօժանդակ նյութեր – թեմատիկ տեսանյութ, ստվարաթուղթ, գուաշ, վրձին, սիլիկոնի հրացան և միջուկ, սոսինձ, դանակ, մկրատ, ինքնակպչուն գունավոր թուղթ:

Ներգրավված անձինք – կրթական ծրագրերի համակարգող, թանգարանի գիտական անձնակազմ, ինչպես նաև ճարտարապետներ:



Թանգարան – **«Վանաձորի քաղաքային համայնքի Կառլոս Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան» ՀՈՒԱԿ**

Ծրագրի անվանում – **«Իմ քաղաքը»**

Թիրախային լսարան – դեռահասներ

Որտեղ – քաղաք Վանաձոր, հարակից տարածքներում

Խումբ – 14 հոգի

Տևողություն – 2 ամիս

Նկարագրություն – ծրագրի ամբողջ ընթացքը բաղկացած է տրամաբանական-հաջորդական գործողություններից՝

- քաղաքում տեղադրված քանդակների, ճարտարապետական հայտնի կառույցների, եկեղեցիների, վանքերի, թանգարանների վայրի որոշում, քարտեզագրում,
- թեմատիկ շրջայցերի կազմակերպում քաղաքում՝ մշակութային հուշարձաններ, թանգարաններ, եկեղեցիներ, վանքեր,
- նշված առարկաների վերաբերյալ տեղեկատվության հավաքում՝ համացանց, գրադարան, հարցազրույցներ,
- ստացված գիտելիքների հիման վրա ստեղծագործական աշխատանքի կազմակերպում՝ ցուցադրությունների ձևով,
- ալբոմի նախապատրաստական աշխատանքների կազմակերպում, հրատարակություն,
- տեսաֆիլմ ծրագրի ընթացքի մասին:

Նպատակ – Վանաձորի մշակութային ժառանգության նկատմամբ անհրաժեշտ վերաբերմունքի ձևավորում:

Անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և գիտաօժանդակ նյութեր – համակարգիչ, տեսախցիկ, ձայնագրիչ, գրականություն:

Ներգրավված անձինք – թանգարանի գիտական բաժին, էքսկուրսիոն բաժին, Վանաձորի արվեստագետներ, մշակույթի ներկայացուցիչներ, մանկավարժներ:

ՏԱՐԵՑ ԱՅՑԵԼՈՒՆԵՐ

Մնծահասակների խմբի մեջ է, մտնում նաև մարդու կյանքի հասուն շրջանը: Գիտնականները տարբեր կերպ են մակնարանում մարդու հասուն կյանքի ընթացքը: Այն ընդգրկում է մոտավորապես 30–70 տարիքը: Հասունություն համարում են մարդու կյանքի ամենաերկար շրջանը: Այս շրջանում ևս մարդու գործունեության հիմնական կողմը շարունակում են մնալ աշխատանքն ու հաջողություններն այդ ասպարեզում և, իհարկե, ընտանիքը: Հենց այս տարիքում է, մարդն առավել աշխատունակ դառնում, ավելի են մեծանում նրա մտավոր և ֆիզիկական կարողությունները, նա պատրաստ է, լինում լուրջ ինտելեկտուալ աշխատանքի: Հաշվի առնելով, որ այս տարիքում մարդն արդեն կայացած և ինքնահաստատված է ընտրած մասնագիտությամբ, հասարակության մեջ կայուն սոցիալական դիրքով և հետաքրքրությունների շրջանակով՝ նրանց հետ աշխատանքում պետք է կիրառել այս առանձնահատկություններից բխող թանգարանային կրթության աշխատաձևերը: Այսինքն, եթե թանգարանի այցելուները մեծահասակներն են, շատ կարևոր է նրանց հոգեբանական առանձնահատկությունների իմացությունն ու կիրառումը կրթական աշխատանքի ժամանակ: Վերջին տարիներին գիտնականներն ուսումնասիրել են այն մեծահասակներին, որոնք նախընտրում են մասնակցել թանգարանային տարբեր միջոցառումների: Ըստ գրանցված արդյունքների՝ մեծահասակ այցելուները բաժանվում են հետևյալ խմբերի.

- ուսման սիրահարներ. այս խմբի մեջ ընդգրկվածները թանգարանն ընկալում են իբրև անձի տեղեկատվական-կրթական պահանջմունքները բավարարելու լավագույն վայր,
- թանգարանների սիրահարներ, որոնք հաճույք են ստանում ազատ ժամանակը թանգարանում անցկացնելով,
- հմտություններ զարգացնողներն այն այցելուներն են, որոնք մասնակցում են թանգարանում իրականացվող ծրագրերին՝ ունեցած հմտություններն առավել զարգացնելու նպատակով,
- այցելուներ, որոնք թանգարանում պարզապես ժամանակ են անցկացնում՝ ծանոթներին ու ընկերներին հանդիպելով:

Տարեց, կենսաթոշակի անցած այցելուների հետ աշխատելիս պետք է հաշվի առնել թե՛ նրանց ֆիզիկական հնարավորությունները, թե՛ գիտելիքներն ու նախասիրությունները: Նրանց շարքում կարող են լինել թե՛ հաճախ թանգարան այցելող, լավ կրթված սոցիալական խմբերի ներկայացուցիչներ, որոնք ծանոթ են թանգարանային տարածքին և իրենց հարմարավետ են զգում, թե՛ լավ կրթություն չստացած, թանգարանային փորձ չունեցողներ:

Նրանցից ոմանք կարող են տեղաշարժման, տեսողական կամ լսողական խնդիրներ ունենալ և խուսափել ամբոխից ու հասարակական տրանսպորտից: Ուստի, այն թանգարանները, որոնք կամենում են ներգրավել տարեց, մշակութային առումով անփորձ այցելուների, համապատասխան ծրագրեր մշակելիս պետք է հաշվի առնեն նման մեծահասակների կարիքները: Դա նշանակում է ունենալ հեշտ հասանելիություն, ժամանակ առ ժամանակ՝ հանգստի կանգառներ, առավել հարմարավետ ու շրջայցի մատչելի երթուղի և տեքստ, տառաչափի և բացատրագրերի դիրքի հարմարավետություն, համապատասխան տեխնիկական միջոցներ ու սարքավորումներ: Այս խմբի համար իրականացվող ծրագրերը պետք է ապահովեն նաև սոցիալական շփումներ: Տարեց սովորողներին ուղղված ծրագրերը կարող են ներառել անցյալի վերաբերյալ հուշեր, ցուցադրություններ, կյանքի պատմություններ, անեկդոտներ, տարազ, ձեռքի աշխատանքներ և այլն: Սակայն պետք չէ կարծել, թե մեծահասակները չեն հետաքրքրվի ժամանակակից թեմաների հետ կապված ծրագրերով:

Ամփոփելով, կարելի է ասել, որ մեծահասակների համար իրականացվող կրթական նախագծերում կարող է ընդգրկել թանգարանային գրեթե ամբողջ լսարանը: Ըստ այդմ՝ թանգարանները պետք է բաց լինեն փոփոխությունների համար, պատրաստ լինեն նորանոր ծրագրեր իրականացնել ոչ միայն երեխաների, այլև մեծահասակների համար:

Յուրաքանչյուր կրթական գործընթաց պետք է հնարավորություն ընձեռի գնահատել տրված նյութի ազդեցությունը: Քանի որ սովորելը ներքին գործընթաց է, ապա արդյունքը գնահատելու համար անհրաժեշտ է գրանցել նաև մասնակցի արձագանքը: Այդ նպատակով, Միացյալ Թագավորության թանգարանների գրադարանները և Արխիվների խորհուրդը մշակել են արդյունքների մի շարք, որոնք հնարավոր է ձեռք բերել թանգարան այցելելու ընթացքում: Ըստ այդ հետազոտության, թանգարանում ձեռք բերված արդյունքը կարելի է դասակարգել հետևյալ խմբերում.

- գիտելիք և ընկալում,
- հմտություններ,
- վերաբերմունք և արժեքներ,
- հաճույք, ոգեշնչում և ստեղծագործական մոտեցում,
- գործունեություն, վարքագիծ և առաջընթաց:

Սրանք կոչվում են ուսումնառության ընդհանուր արդյունքներ (generic learning outcomes – GLOs): Թանգարանում ուսումնառության ազդեցությունը գնահատելիս պետք է հաշվի առնել հետևյալ ցուցիչները.

- որոշակի առարկաների մասին գիտելիքների ընդլայնում,
- որոշակի գաղափարների և հասկացությունների ընկալման խորացում,
- տեխնիկական և այլ հմտությունների բարելավում,
- փոփոխություն վերաբերմունքի կամ արժեքների մեջ,
- հաճույք, ոգեշնչում կամ ստեղծագործական ունակություն,
- գործունեության, վարվելակերպի, առաջընթացի վկայություն,
- սոցիալական շփումներ և հաղորդակցություն,
- ինքնավստահության աճ,
- անհատական զարգացում,
- համայնքային իրավասություններ,
- ինքնության զարգացում,
- բարելավված առողջություն և ինքնազգացողություն:

Թանգարանային միջավայրը կարևոր դեր է խաղում այցելուների ինտելեկտուալ հետաքրքրությունը խթանելու, յուրօրինակ մշակութային և հուզական արժեքներով հարուստ փորձի մեջ ներգրավելու ուղղությամբ: Այցելուներն ավելի մեծ հաճույք կստանան և ավելի սիրով կսովորեն, եթե թանգարանում լավ ընդունելության արժանանան, գտնվեն ֆիզիկապես հարմարավետ և հյուրընկալ միջավայրում:



Թանգարան – **Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան**

Ծրագրի անվանում – **«Կարաոկե թանգարանում»**

Թիրախային լսարան – 8 տարեկանից բարձր երեխաներ, ուսանողներ, ընտանիքներ և մեծահասակներ

Որտեղ – երաժշտության պատմության ցուցասրահում, միջոցառումների դահլիճում

Խումբ – 10 – 15 հոգի

Տևողություն – 1 ժամ

Նկարագրություն – գրականության և արվեստի թանգարանի երաժշտարվեստին նվիրված ցուցասրահում մասնակիցները ծանոթանում են հայ մեծանուն երգահանների կյանքին ու գործունեությանը, դիտում նրանց լուսանկարները, երաժշտական գործիքները, հագուստը և այլ մասունքներ, որոնք պահպանվում են թանգարանում, այնուհետև, թանգարանի Կոմիտասի անունը կրող դահլիճում երգուսույցի (կարաոկե) միջոցով սովորում և կատարում նրանց երգերը:

Ծրագրի իրականացման համար ընտրվել են հայ կոմպոզիտորների առավել ճանաչված և մատչելի երգեր՝ օրինակ՝ Կոմիտասի «Արև, արև», «Կաքավիկ», «Շողեր ջան», «Հոյ, Նազան», «Խնկի ծառ», Առնո Բաբաջանյանի «Իմ Երևան», «Երևանի սիրուն աղջիկ», Սայաթ Նովայի «Քամանչա» և այլ ստեղծագործություններ:

Երգերն ուղեկցվում են տվյալ հեղինակի անձնական լուսանկարների տեսաշարով, որոնք պահվում են Գրականության և արվեստի թանգարանի ֆոնդերում:

Նպատակ –

- երեխաների համար մատչելի մատուցելով արվեստի այս ճյուղը՝ սեր առաջացնել երգարվեստի նկատմամբ,
- օգտագործելով նոր «մեդիա-տեխնոլոգիաների» ըն-



ձեռած հնարավորությունները՝ հասնել մշակութային կյանքում նրանց իրական ներգրավվածությանը և հայ երաժշտական ժառանգության վերաբերյալ իրազեկության բարձրացմանը,

- նպաստել նաև թանգարանի սոցիալական դերի բարձրացմանը՝ դարձնելով այն սիրած ժամանցի վայր երեխաների և նրանց ծնողների համար:

Անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և գիտաօժանդակ նյութեր – համակարգիչ, պրոյեկտոր, ուսուցանվող երգերի CD – ների կարաոկե տարբերակ:

Ներգրավված անձինք – թանգարանային մանկավարժ, երաժիշտ:



ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Գաֆէսճեան արվեստի կենտրոն

Թանգարանային ուսումնառությունը վերափոխող փորձառություն է, որի ընթացքում մենք ձևավորում ենք նոր մոտեցումներ, գնահատականներ, հեղաբրբրություններ, համոզմունքներ և արժեքներ ոչ ֆորմալ, ազատ միջավայրում, որի կենտրոնում թանգարանային առարկան է:

Բարի Լորդ, Թանգարանային ուսումնառության ձեռնարկ, 2007

Ամփոփելով՝ ևս մեկ անգամ ընդգծենք, որ թանգարանները, որպես մշակութային ներուժի հարուստ տարածքներ, ի սկզբանե ձևավորվել են որպես լուսավորական կառույցներ, և կրթությունը, որպես հիմնական գործառույթ, պետք է կազմի թանգարանների բուն առաքելության անկյունաքարը:

Կարևոր է հիշել, որ թանգարանային կրթությունը ոչ-ֆորմալ է և, անկախ ներկայացվող նյութի գիտակրթական կարևորությունից, ցանկացած միջոցառում պետք է անցնի մասնակիցների համար ազատ և անկաշկանդ միջավայրում: «Թանգարանային ուսումնառության ձեռնարկի» հեղինակ

Բարի Լորդը թանգարանային ուսումնառությունը բնութագրում է նաև որպես զգայական, քանզի ճանաչողական լինելով՝ այն նպաստում է նոր հետաքրքրությունների, արժեքների, համոզմունքների ձևավորմանը:

Ընդհանուր առմամբ, թանգարանային ուսումնառությունը զգայական հաղորդակցություն է ոչ-ֆորմալ ազատ համատեքստում, որը հաստատվում է ոչ միայն այցելուի և թանգարանային առարկայի միջև, այլև այցելուի և կրթական մասնագետների, ներգրավված այլ մասնակցիների միջև: Այլ խոսքով, թանգարանային ուսումնառությունը ոչ թե թանգարանային առարկայի, այլ մարկանց մասին է:

Ձեռնարկում ներկայացնելով կրթական ծրագրերի նախագծման գործնական փուլերը, ինչպես նաև թիրախային լսարանի մի ստվար հատվածի հետ աշխատանքային ձևերը և սկզբունքները, միաժամանակ կարևոր է ընդգծել, որ թանգարանային կրթությունը, որպես թանգարանի գիտամշակութային ներուժի հաղորդակցություն, առավել լայն գործընթաց է և ենթադրում է ոչ միայն կրթության համար անմիջականորեն պատասխանատու անձնակազմի, այլև թանգարանի բոլոր բաժինների սերտ համագործակցությունը:

Հուսով ենք, որ ներկայացվող ձեռնարկը կնպաստի հայաստանյան թանգարաններում նոր ստեղծագործական կյանքի կոչմանը և թանգարանների՝ որպես շարունակական ուսումնառության կարևորագույն կենտրոնների հաստատմանը:



Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության թանգարան

Թանգարան – Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության թանգարան

Ծրագրի անվանում – *Հատուկ կարիքներ ունեցող այցելուների հետ տարվող ծրագրերն ու աշխատանքները ՀՊՄՀ պատմության թանգարանում*

Մանկավարժական համալսարանի պատմության թանգարանը մեծ տեղ է հատկացնում հատուկ կարիքներ ունեցող այցելուների հետ տարվող աշխատանքներին: 2013թ. հոկտեմբերին Համալսարանի և Լեհական «Ari Ari» հիմնադրամի միջև կնքված պայմանագրի շրջանակներում թանգարանը, հատուկ կրթության ֆակուլտետի հետ միասին, սկսեց նոր ծրագրեր մշակել տեսողական խնդիրներ ունեցող այցելուների համար: Կույր և թույլ տեսնող

անձանց հիմնախնդիրներով զբաղվող «Ari Ari» հիմնադրամի նպատակն է այս ոլորտում ձևավորված լեհական հարուստ փորձը փոխանցել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի համապատասխան հիմնախնդիրներով զբաղվող կառույցների մասնագետներին:

Լեհական «Ari Ari» հիմնադրամի տիֆլոմանկավարժ Մառեկ Յակուբովսկին 2013թ. հոկտեմբերին այցելեց ՀՊՄՀ թանգարան, որի շնորհիվ հիմք դրվեց թանգարան-հիմնադրամ համագործակցությանը: Մ. Յակուբովսկին «Կույրերի և թույլ տեսնողների տարածական կողմնորոշումը թանգարանում» թեմայով դասախոսություն կարդաց համալսարանի ուսանողների և մասնագետների համար: Նրա նախաձեռնությամբ այսօր թանգարանը համագործակցում է Երևանի թիվ 14 հատուկ դպրոցի հետ, որտեղ սովորում են թույլ տեսնող և կույր երեխաներ: Համագործակցության նպատակն է համալսարանի թանգարանում ստեղծել տեսողական խնդիրներ ունեցող այցելուների պահանջներին ու հնարավորություններին համապատասխան միջավայր: Թանգարանում տեղադրվել են բրալյան տարբերակով անոտացիոն տեքստեր, վահանակներ, որոնց պատրաստման և տեղադրման խնդիրներին օժանդակել է թիվ 14 հատուկ դպրոցի տիֆլոմանկավարժ Անդրանիկ Գրիգորյանը: Թանգարանն ունի նաև աուդիոգիդ (ձայնային էքսկուրսիա), որը տեսողության խնդիր ունեցող այցելուին հնարավորություն է ընձեռում ինքնուրույն շրջել թանգարանում՝ ունկնդրելով էքսկուրսիոն տեքստը: Այս ամենից բացի՝ մանկավարժական համալսարանի մուտքի աստիճանահարթակի առաջին և վերջին աստիճանների եզրերը գծանշվել են դեղին գույնով, որն էլ նպաստում է թույլ տեսնողների ինքնուրույն տեղաշարժման գործընթացի դյուրացմանը: 2015թ. հունվարի 15-ին հատուկ կրթության ֆակուլտետի մասնագետները և նույն ֆակուլտետի մագիստրատուրայի բաժնի ուսանող Սիփան Ասատրյանը փորձարկեցին ու գնահատեցին տեսողական խնդիրներով այցելուների համար նախատեսված նյութերի կիրառման հնարավորություններն ու արդյունավետությունը: Հանդիպման ավարտին Սիփան Ասատրյանը այդօրինակ խնդիրներ ունեցող այցելուների համար նախատեսված թանգարանի տպավորությունների մատյանում երախտագիտության խոսքեր հղեց նախաձեռնության բոլոր անդամներին:

IZI.travel - միջազգային ծրագրի ընձեռած կրթական հնարավորությունները և կիրառումը ՀՊՄՀ պատմության թանգարանում

IZI.travel-ը բջջային հեռախոսների համար մշակել է հեշտ հասանելի և անվճար ծրագիր՝ թանգարաններում և քաղաքներում ձայնագրված (աուդիո) ուղեցույցներ ստեղծելու

նպատակով: Այն այսօր հաջողությամբ կիրառվում է աշխարհի մի շարք թանգարաններում և քաղաքներում: Ծառայությունը հնարավորություն է տալիս ներկայացնել ոչ միայն տվյալ վայրի կամ թանգարանի մասին պատմության ձայնագրյալ տարբերակն, այլև տեղադրել տեսագրություններ, լուսանկարներ, թեմայի շրջանակներում կազմակերպել վիկտորինաներ, որոնք թանգարանի այցելուների կամ քաղաք այցելած զբոսաշրջիկների վրա մեծ ազդեցություն կգործեն: Ծրագիրը հնարավորություն է տալիս զբոսաշրջիկներին շրջայցերն իրականացնել տարբեր եղանակներով՝ հետիոտն, հեծանվով և ավտոմեքենայով, իսկ ջրային տարածքներով հարուստ երկրներում՝ նավով:

Այն կրթական լայն հնարավորություններ է ընձեռում տարբեր խմբերի այցելուների, այդ թվում՝ նաև հատուկ կարիքներ ունեցողների համար: Օրինակ, որևէ հայտնի նկարչի կամ քանդակագործի նվիրված թանգարանում բեռնելով այս ծրագիրը, կարելի է հավելյալ տեղեկություն ստանալ նաև տվյալ ստեղծագործողի այլ աշխատանքների գտնվելու վայրի մասին: Բացի այդ, կա մի լրացուցիչ հնարավորություն ևս, որը կհետաքրքրի և կոգևորի ուսումնական հաստատություններում դասավանդող մանկավարժներին. յուրաքանչյուր ոք, առանց իր գտնվելու վայրից հեռանալու, կարող է բեռնել այս կամ այն թանգարանի կամ հուշարձանի պատմությունը, տեղում մանրամասն ծանոթանալ հետաքրքիր փաստերին և իրադարձություններին և այդ նյութը հետագայում հետաքրքիր կրթական աշխատանքների հիմք դարձնել: Աուդիո ուղեցույցներն աշխատում են iOS , Android և WINDOWS ծրագրերով ներբեռնված սարքավորումներով, փակ և բացօթյա տարածքներում, օնլայն և օֆլայն ռեժիմով, QR կոդերի օգնությամբ կամ՝ առանց դրանց: Շրջագայության ընթացքում GPS կողմնորոշիչը, քարտեզի միջոցով, կօգնի այցելուներին հեշտությամբ գտնել թանգարանի ճանապարհը:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի թանգարանն այս ոլորտում արդեն փորձառություն ունի, քանզի գործում է IZI.travel ծառայության աուդիոգիդ անվճար ծրագրով: Այն դեռևս հասանելի է 2 լեզվով: Հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող այցելուների հետ տարվող աշխատանքների կարևորությունն ու առաջնահերթությունը, ինչպես նաև օգտվելով ծրագրի ընձեռած լայն հնարավորություններից, թանգարանի էքսկուրսիոն տեքստը հասանելի է նաև լսողության և խոսքի խանգարման խնդիրներ ունեցողների համար՝ սյուրդոտեքստերի միջոցով, որոնք համապատասխանաբար տեղադրված են ցուցանմուշի տեսագրության բաժնում: Ծրագիրը կարևորվում է նաև տիֆլոմանկավարժության տեսանկյունից, քանի որ ձայնագրյալ էքսկուրսիոն տեքստն, առանց հատուկ միջոցների ներդրման, հասանելի է նաև այս խմբի այցելուների համար:

Այսօր աշխատանքներ են տարվում նաև գրոսաշրջային շրջայցի կազմակերպման ուղղությամբ: Այն նշված ծրագրերով աշխատող սարքեր ունեցողներին հնարավորություն կտա առանց հավելյալ ջանքերի ծանոթանալ մայրաքաղաքի պատմաճարտարապետական, մշակութային կոթողներին և օջախներին, դրանց պատմությանը, գործունեությանը և զարգացման հեռանկարներին, տեղեկանալ ժամանցի վայրերի գտնվելու տեղին և ծառայությունների ցանկին:

Ըստ էության, ծրագրի հնարավորություններն անսահմանափակ են և կարող են սահմանափակվել միայն մեր երևակայությամբ:

«Հայոց գրերի գյուտը» խաղ-էքսկուրսիա

Այս խաղ-էքսկուրսիան նախատեսված է 1 4-րդ դասարանի աշակերտների համար: Ծրագրի հիմքում ընկած է հայոց գրերի ստեղծման պատմությունը: Նպատակն է էքսկուրսիայի անմիջական մասնակիցներին հոգևհարազատ խաղային տարբերակով ներկայացնել հայոց այբուբենի ստեղծման պատմական ժամանակաշրջանը, երբ մեր երկրի հոգևոր և աշխարհիկ ղեկավարները հայրենիքի հզորացման և ազգապահպանման գործում առաջնային էին համարում գիտելիքներով գինված ու կրթված սերնդի ձևավորումը:

Խաղ էքսկուրսիայի ընթացքում էքսկուրսավարը հարցերի միջոցով «բացահայտում» և ամրապնդում է դպրոցում ստացված գիտելիքները (ով է Մեսրոպ Մաշտոցը, երբ է ստեղծվել հայոց այբուբենը, ով էր այդ տարիներին հայոց արքան, կաթողիկոսը և թեման բացահայտող նման հարցեր): Ճիշտ պատասխանողներն ընտրվում են Մեսրոպ Մաշտոցի, Վռամշապուհ արքայի և Սահակ Պարթևի դերակատարներ և կերպարանափոխվում յուրաքանչյուր կերպարի համար նախատեսված հանդերձանքով՝ թիկնոց, թագ, վեղար և այլն: Այնուհետև, երեխաները Մեսրոպ Մաշտոցին «ճանապարհում են» հեռավոր երկրներ՝ հայոց գրերը հայտնաբերելու և Հայրենիքում լուսավորություն տարածելու նպատակով: Խաղավարը հիշեցնում է, որ Մաշտոցը քրիստոնյա հոգևորական էր և առանձնահատուկ կարևորում էր «Աստվածաշունչը» հայերեն թարգմանելը՝ Աստծո խոսքը ժողովրդին առավել հարազատ ու ընկալելի դարձնելու և միասնականության համար: Ուստի, նրան հաջողության մաղթանքներով ճանապարհելիս, երեխաները խմբով արտաբերում են դպրոցում սովորած «Հայր մեր» տերունական աղոթքը: Որպեսզի երեխաների մոտ տպավորություն ստեղծվի, թե Մեսրոպ Մաշտոցը շրջում է երկրե երկիր, նրա դերակատարն էքսկուրսավարի ուղեկցությամբ շրջում է թանգարանում և քիչ անց

վերադառնալով՝ ներկայացնում է նորաստեղծ գրերը: Նրա գլխավորությամբ՝ մասնակիցները ոգևորված և առոգանությամբ արտասանում են հայոց այբուբենը:

Հաջորդ սյուժեն կապվում է գրերի ստեղծմանը հաջորդած՝ կրթօջախների հիմնման պատմությանը, որին երեխաները ծանոթանում են Մեսրոպ Մաշտոցի քանդակի մոտ (հեղինակ՝ գեղարվեստական կրթության ֆակ.-ի շրջանավարտ Վարդգես Մելքոնյան, ղեկավար՝ Մ. Մելքոնյան, 2014թ.): Ապա մասնակիցները մոտենում են նախասրահում ցուցադրված միջնադարյան վանական համալիրների պաստառներին՝ ներկայանալով իբրև դրանց կազմում գործող բարձրագույն դպրանոցների ու վարդապետարանների սաներ: Մեսրոպ Մաշտոցի դերակատարը շրջում է այդ կրթօջախներով, և յուրաքանչյուրի մոտով անցնելիս սաները բարձրաձայն արտաբերում են իրենց դպրանոցի անունը: Այս կերպ երեխաներն ամրապնդում են ձեռք բերած նոր գիտելիքները միջնադարյան ուսումնական հաստատությունների վերաբերյալ:

Էքսկուրսիայի ավարտին խումբը շրջում է թանգարանում, ծանոթանում Մանկավարժական համալսարանի համառոտ պատմությանը հաղորդակցվում նոր տեխնոլոգիաներով վերականգնված Խաչատուր Աբովյանի կենդանացած կերպարին և լսում սերունդներին ուղղված մեծ լուսավորչի պատգամը:

«Ճանաչենք Խաչատուր Աբովյանին» թեմատիկ էքսկուրսիա

Այս թեմատիկ էքսկուրսիան նախատեսված է 3-7-րդ դասարանի աշակերտների համար: Ծրագրի նպատակն է երեխաներին ծանոթացնել Խաչատուր Աբովյանի կյանքին և գործունեությանը, դառնալ նրա ստեղծագործությունների անմիջական կրողն ու տարածողը դպրոցի սահմաններից դուրս: Այն իրականացվում է 2 փուլով: Էքսկուրսիային մասնակցում են ոչ միայն թանգարանի աշխատողներն, այլև բուհի պրակտիկանտ-ուսանողները և ուսուցիչները: Խ. Աբովյանի դիմանկարի մոտ մասնակիցները ծանոթանում են մեծ լուսավորչի կյանքին ու գործունեությանը, շրջում թանգարանում, ծանոթանում Մանկավարժական համալսարանի համառոտ պատմությանը, հաղորդակցվում նոր տեխնոլոգիաներով վերականգնված Խաչատուր Աբովյանի կենդանացած կերպարին և լսում սերունդներին ուղղված նրա պատգամը: Ապա ուսուցիչը կամ թանգարանի աշխատակիցը ընտրում են Խ. Աբովյանի ստեղծագործություններից մեկը և երեխաներին առաջարկում միասին բեմադրել այն: Նախապատրաստվելուց հետո երեխաները թանգարանում ներկայացնում են իրենց





բևմականացրած տարբերակը:

Ծրագիրը եզրափակվում է թեմայի շրջանակներում կազմված հարց ու պատասխանով, որի նպատակն է ստուգել և ամրապնդել երեխաների ձեռք բերած գիտելիքները:

Մանկավարժական համալսարանի սկզբնական կրթության ֆակուլտետի պրակտիկանտներ Արևիկ Ամիրշադյանի և Սեդա Սաղաթելյանի նախաձեռնությամբ, թանգարանի աշխատակցուհի Հայարփի Անանյանի և թիվ 57 դպրոցի դասվար Աննա Գրիգորյանի անմիջական մասնակցությամբ վերոհիշյալ ծրագիրը փորձարկվեց՝ երրորդ դասարանի աշակերտների մասնակցությամբ: Նրանք բեմադրեցին Խ. Աբովյանի «Հացակեր փեշը» առակը: Հարց ու պատասխանի միջոցով պարզվեց, որ երեխաները յուրացրել են նոր գիտելիքները և թանգարանից հեռանում են մեծ ոգևորությամբ, քանի որ իրենք ոչ միայն թանգարանի այցելուներ էին, այլև նոր տեղեկատվության ու գիտելիքի անմիջական կրող ու փոխանցող:

Թանգարան – «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարան
Ծրագրի անվանում – «Իմ առաջին թանգարանը» խաղ-էքսկուրսիա
Թիրախային լսարան – 3-րդ և 4-րդ դասարանցիներ
Որտեղ – թանգարանի լսարանում և ցուցասրահներում
Խումբ – մինչև 25 մասնակից
Տևողություն – 40-60 րոպե

Նկարագրություն – Խաղ-էքսկուրսիան բաղկացած է երեք մասից: Առաջինում խաղավար-էքսկուրսավարը ցուցասրահում մասնակիցներին ներկայացնում է Մեծամորի հնագույն պատմությունը, ծանոթացնում հնագույն բնակիչների կենցաղի ու արհեստների առանձնահատկությունների հետ: Երկրորդ մասում խաղավարը խմբերի է բաժանում մասնակիցներին, հանձնարարում ըստ ստացած տեղեկությունների ներկայացնել Մեծամորի բնակիչների կենցաղն ու արհեստները (խեցեգործություն, մետաղամշակություն): Խմբերի մասնակիցները տարբեր դիդակտիկ նյութերի միջից ընտրում են իրենց թեմային վերաբերող առարկաներն ու լուսանկարները և ներկայացնում թեման: Ըստ անհրաժեշտության, խաղավարն ընթացքում ճշտումներ և լրացումներ է կատարում: Երրորդ հատվածում խաղավարն ամփոփում է մասնակիցների ներկայացրած թեմաների արդյունքները և նվերներ մատուցում խմբերին:

Նպատակ –

- Մեծամոր հնավայրի օրինակով համառոտ տեղեկություններ հաղորդել Հայաստանի հնագույն պատմության, բնակչության կենցաղի ու մշակույթի մասին՝ հաշվի առնելով տեղեկատվություն ընկալելու երեխաների տարիքային հնարավորությունները,
- վաղ հասակից երեխաների մեջ սերմանել թանգարան հաճախելու մշակույթը,
- թանգարանը դարձնել ոչ միայն կրթության տարածման, այլև հաճելի ժամանցի վայր,
- զարգացնել մասնակիցների ուշադրությունը, արագ և ճշգրիտ պատասխան ձևակերպելու ունակությունը,
- ներգրավել թիմային աշխատանքում,
- նպաստել գեղագիտական դաստիարակությանը:

Անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և գիտաօժանդակ նյութեր – կենցաղին, արհեստներին վերաբերող իրերի լուսանկարներ, հնագիտական առարկաների կրկնօրինակներ, հիմնական և օժանդակ թանգարանային առարկաներ, տեսալսողական սարքավորումներ, տեխնիկական միջոցներ:

Ներգրավված անձինք – էքսկուրսավար:



Թանգարան – **Ռուսական արվեստի թանգարան (պրոֆ. Արամ Աբրահամյանի հավաքածու)**

Ծրագրի անվանում – **«Մի նկարի պատմություն» կրթական շարքից՝ ինտերակտիվ խաղ – էքսկուրսիա, ըստ Բորիս Գրիգորևի «Կենդանաբանական այգի» կտավի**

Թիրախային լսարան – 4 – 7 տարեկան երեխաներ

Որտեղ – թանգարանի երկրորդ ցուցասրահում

Խումբ – 10 – 15 հոգի

Տևողություն – 35 – 40 րոպե

Նկարագրություն – երեխաները նախ ծանոթանում են թանգարան երևույթի և դրա տարբեր տիպերի հետ, պատմում, թե մինչ այդ ինչ թանգարաններում են եղել: Թղթից պատրաստված երեք ժպիտ (smail) կերպարների միջոցով ծանոթանում են թանգարանի երեք կանոններին՝ չաղմկել, ուշադիր լսել էքսկուսավարին և ցուցանմուշներին ձեռք չտալ (առաջին փուլի տևողությունը՝ 5-10 րոպե): Զրույցն ամփոփվում է Ռուսական արվեստի թանգարանի վերաբերյալ հակիրճ տեղեկատվությամբ:

Ապա, հարց ու պատասխանի միջոցով, ճշտում են նրանց գիտելիքներ կենդանաբանական այգու մասին, օրինակ, թե ինչ նպատակով են ստեղծվում դրանք և ինչ կենդանիներ կարող է այցելուն այնտեղ տեսնել: Փորձում են նաև տարբերակել ընտանի և վայրի կենդանի հասկացությունները (տևողությունը՝ 10 րոպե):

Կենդանաբանական այգու վերաբերյալ զրույցին հաջորդում է Բ. Գրիգորևի գործունեության և նրա ստեղծած «Կենդանաբանական այգի» կտավի վերաբերյալ դաս-էքսկուրսիան, որը նույնպես հարց ու պատասխանի եղանակով է ընթանում: Մասնակիցները ծանոթանում են նկարում պատկերված կենդանիների տեսակների և բնակավայրերի հետ: Նկարչի ստեղծագործության մեջ, կարծես, մարդիկ,



կենդանիները և ծառերն իրար նման են կառուցվածքով, քարացած դիրքով, ճկվածությամբ և ընկալվում են իբրև ամբողջություն: Սակայն, մարդկանց դեմքերը կենդանակերպ են, իսկ կենդանիներն առավել ներդաշնակ են բնությանը: Կենդանիները ձուլված են բնությանը, կարծես մեկ ամբողջություն են, իսկ մարդիկ զարմանալիորեն կենդանակերպ են պատկերված: Այս եղանակով նկարիչը փորձում է ցույց տալ, որ ի տարբերություն իրական կենդանիների, մարդիկ ավելի անխնա ու գազանաբար են վարվում բնության հետ, աղտոտում և ոչնչացնում են այն (ծառեր են հատում, անխնա որս անում, աղբը թողնում են անտառում և այլն) (տևողությունը՝ 10 րոպե):

Ապա մասնակիցները գործնական առաջադրանք են կատարում, որն ընթանում է երեք փուլով.

գտնել տարբերությունները երկու նկարների միջև. բնօրինակ կտավի կողքին նույն նկարի տպագիր օրինակն է դրվում, որի վրա ավելի շատ կենդանիներ են պատկերված:

Ներկայացվում են հանելուկներ նկարում պատկերված կենդանիների վերաբերյալ: Դրանք լսելուց հետո մասնակիցները փորձում են նկարում գտնել կենդանուն:

Ռետինե կենդանիների միջոցով ստեղծում են կենդանաբանական այգի, որտեղ տեղադրում են վայրի կենդանիներին, որոնց մասին արդեն բավականին տեղեկություններ են ստացել: Նույն կերպ նաև ստեղծում են ագարակ, որտեղ տեղադրում են տնային կենդանիներին: Այս առաջադրանքը նախատեսվում է 5-6 տարեկանների համար. հանձնարարությունը տրվում է փազլի տեսքով:

Նպատակ -

- մասնակիցներին ծանոթացնել «թանգարան» երևույթի հետ, վերջինիս նկատմամբ հետաքրքրություն առաջացնել,
- Բ. Գրիգորևի «Կենդանաբանական այգի» նկարի



միջոցով՝ երեխաներին առավել հանգամանալից ներկայացնել, կենդանաբանական այգիների ստեղծման նպատակը,

- հստակեցնել նրանց պատկերացումները վայրի և ընտանի կենդանիների վերաբերյալ,
- տեղեկություն տալ նկարում պատկերված կենդանիների վերաբերյալ,
- ստացված գիտելիքն ուղղորդել բնապահպանական դաստիարակությանը:

Ծրագրի գործնական մասի միջոցով զարգացնել երեխաների ուշադրությունը, տրամաբանական մտածողությունը, տեսողական հիշողությունը, հարստացնել կենդանիներին առնչվող բառապաշարը: Երեխաների մոտ սեր առաջացնել բնության, շրջակա միջավայրի և կենդանիների նկատմամբ:

Անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և գիտաօժանդակ նյութեր – ռետինե խաղալիքներ, գունավոր թղթերի վրա պատկերված հանելուկներ, գեղանկարի տպագիր և փոփոխված օրինակ:

Ներգրավված անձինք – ծրագրավար:

Թանգարանների միջազգային խորհրդի /ICOM/ Կրթության և մշակութային գործունեության միջազգային կոմիտեի /CECA/«Լավագույն փորձ» կրթական ծրագրերի մրցույթին Հայաստանի կողմից ներկայացված Հովհաննես Թումանյանի թանգարանի «Երկնքից երեք խնձոր ընկավ» հեքիաթի ծրագիրը (2012թ.) և Կոմիտասի թանգարան-ինստիտուտի «Օրորներ». երգի արվեստանոց ծրագիրը՝ նախատեսված երիտասարդ ծնողների համար (2016թ.) տեղ են գտել լավագույն հնգյակի շարքում՝ արժանանալով մրցանակների:

Միցույթում խրախուսական դիպլոմներով են պարգևատրվել Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի «Դպրոցին հյուր» ծրագիրը (2013թ.) և Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանի «Ազգային նվաճարանների աշխարհում» կրթական ծրագիրը՝ նախատեսված նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների համար (2016թ.):

Բոլոր չորս ծրագրերը հրատարակվել են թանգարանային կրթության ոլորտի լավագույն փորձը ներկայացնող անգլերեն ժողովածուում:



Հեղինակները շնորհակալություն են հայտնում բոլոր այն թանգարաններին, որոնք սիրով տրամադրել են ձեռնարկում ներկայացված կրթական ծրագրերի օրինակները:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Բարսեղյան Լ.Ա.,** *Թանգարանն այցելումով է թանգարան. գիտալուսավորական աշխատանքները թանգարաններում:* //Կուլտուր-լուսավորական աշխատանք, 1984, թիվ 2, էջ 7 13:
2. **Գիբս Ք., Սանի Մ., Թոմսոն Ջ.,** *Շարունակական կրթություն թանգարաններում,* Եվրոպական ձեռնարկ, Երևան, 2007:
3. **Գրիգորյան Ա.,** *Թանգարանի և դպրոցի համագործակցության դերը դպրոցականների պատմական գիտակցության ձևավորման հարցում:* //Խ.Աբովյանի ծննդյան 200-ամյակին նվիրված ՀՊՄՀ ի 54-րդ գիտական նստաշրջանի զեկուցումների ժողովածու, Երևան, 2009:
4. **Պիկիչյան Հ., Հարոյան Մ., Գրիգորյան Ա.,** *Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ:* Ուսումնական ձեռնարկ, Երևան, Էդիտ պրինտ, 2007:
5. **Ambrose**, *Timothy and Paine, Crispin, Museum Basics*, 2nd edition, Routledge, London, 2006.
6. **Bedford L.,** *The Art of Museum Exhibitions, How Story and Imagination Create Aesthetic Experience*, Left Coast Press, 2014.
7. **Bergeron A. and Tuttle B.,** *MAGNETIC: The Art and Science of* Engagement, The AAM Press, 2013.
8. **Cameron D.A,** *Viewpoint: The Muzeum as a Communications System and Implications for Muzeum Education //* Curator, Vol. 11,#1, 1968.P.33-40.
9. **Cohen Ts., Porter T.,** *Learning in Museums: Families in Museums*, Staff Training Curriculum, 2008-2012, http://www.bostonchildrensmuseum.org/sites/default/files/pdfs/Learning_Together.pdf.
10. **Dolak J.,** *Life-long Education in museology and World Heritage. Collected Articles of International Scientific Conference on Objectives of Post-Graduate and Lifelong Education*, Yerevan, 2010.
11. **Duclos-Orsello E.,** *Shared Authority the Key to Museum Education as Social Change .*
12. *Education as a Tool for Museums. Final Report on the SOCRATES Project MUSAEAM* (Museum and adult Education are more). Edited by Jutta Thinesse-Demel., Budapest, 2001.
13. *Excellence and Equity, Education and the Public Dimension of Museums, A Report from the American Association of Musuems*, 1992. http://www.depts.ttu.edu/museumttu/CFASWebsite/5333/Required%20Readings%202011/Hirzy_Excellence%20&%20Equity.pdf.
14. *Excellence in Practice: Museum Education practice and Standards, developed by Committee of Education, AAM* http://www.aam-us.org/docs/default-source/accreditation/committee-on-education.pdf?sfvrsn=0
15. **Falk J. H., Dierking L. D.,** *Learning from the Museum. Walnut creek, CA, Alta Mira Press*, 2010.
16. **Hein G. E.,** *Learning in the Museum*, Routledge, 1998.

17. **Hooper-Greenhill E.,** *Museums and their Visitors. London and* New York, Routledge, 1999.
18. **Hooper-Greenhill E.,** *A New Communication Model for Museums* //Museum Languages: Objects, Texts.Ed.G. Kavanagh. Leicester Univ. Press, 1991.
19. **Hooper-Greenhill E.,** *Writing a Museum Education Policy, Department of Museum Studies*, University of Leicester, 1991 http://www.museumsontario.ca/sites/default/files/members/EileanHooperGreenhillEducationPolicy_0.pdf.
20. **O'Neill M.,** *Making Histories of Religion.*//Kavanagh,G Making Histories in Muzeums, London/ New York, Leicester University Press, 1996.
21. **Roberts L. C.,** *From Knowledge to Narrative: Educators and the Changing World*, Smithsonian Press; 1 edition, 1997.
22. **Talboys G. K.,** *Museum Educator's Handbook*, Ashgate Publishing Company, second edition, 2005.
23. *The Manual of Museum Learning*, edited by Barry Lord, AltaMira Press, 2007.
24. **Агамирян Ж.**, *Детская картинная галерея. Ереванский опыт работы с детьми.* М.: Советский художник, 1979.
25. **Артемов Е.Г.**, *Музейно-педагогическая технология.* СПб., ГМ ПИР, 1999.
26. **Ванслова Е.Г.,** *Дети в музее. Лекция отменяется* //1993, № 1. стр. 46-47.
27. **Ванслова Е.Г.,** *Музей и культура.* Программа для учителей начальных классов и музейных работников. М., МИРОМ. 2001. С. 1-64
28. **Ванслова Е.Г.,** *Музейный всеобуч: возможно ли это?* //Искусство в школе. 1994. № 2. стр. 36-38.
29. **Ванслова Е.Г.,** *Программа и методические материалы для учителя начальных классов и педагога дополнительного образования.* Курс «Музей и культура в 1-4 классах образовательных учреждений», М., 2004.
30. **Ванслова Е.Г.,** *Путешествие в предметный мир* //Советский музей. 1983, № 1(73), стр. 28-39.
31. **Гнедовский М. Б.,** *Музейная аудитория* //Сов. музей, 1986, № 4.
32. *Государственные образовательные стандарты высшего профессионального образования.* Педагогические науки. СПб.: Изд-во РГПУ им. А.И.Герцена, 2002.
33. **Григорян А.,** *Музей как образовательная среда.* //Թանգարան գիտատեսական և մեթոդական հանդես, Երևան, 2009, թիվ 1, էջ 148:
34. **Коссова И. М.,** *Культурно-образовательная деятельность музеев: тенденции и перспективы*//Ориентиры культурной политики: Информ. вып. № 4 //М-во культуры РФ. Рос. инс-т переподгот. работников искусства, культуры и туризма; Гл. ИВЦ. М., 1997.
35. **Коссова И. М.,** *Музей и образование взрослых* //Ориентиры культурной политики : Информ. вып. № 4 /М-во культуры РФ. Рос. ин-т переподготовки работников искусства, культуры и туризма; Гл. ИВЦ. М., 1997.

36. **Ломунова А.К.,** *Воспитание музейной культуры посетителя: Конспект лекций* / Всесоюз. инс-т повышения квалификации работников культуры, М., 1988.
37. **Ломунова Л.К.,** *Учитель обращается в музей* //Сов. музей. 1983. № 2.
38. **Медведева Е.Б.,** *Германия - страна детских музеев* //Вестник Ассоциации «ОТКРЫТЫЙ МУЗЕЙ. 1999. № 1-2.
39. *Музей и школа*: Пособ. для учителя /Е.Г. Ванслова, А.К. Ломунова, Э.А. Павлюченко и др.; Сост. Э.А. Павлюченко; Под общ. ред. Т.А. Кудриной. М., 1985.
40. *Музееведение. Музеи исторического профиля:* Учеб. пособие для вузов по спец. «История»/ Под ред. К.Г. Левыкина, В. Хербста. - М.: Высш. шк., 1988.
41. *Музейный всеобуч. Научно-практические рекомендации.* М., НИИК. 1989.
42. **Некрасова-Каратеева О.Л.,** *Художественное восприятие и творчество детей в изокружке при музее* // Восприятие изобразительного искусства школьниками, М., 1988.
43. *Основы музееведения:* Учебное пособие /Отв. ред. Э.А. Шулепова, М.: Едиториал УРСС, 2005.
44. **Платонова О.В., Жвитиашвили Н.Ю.,** *Арттерапия в художественном музее*: Учеб. пособие для студентов гуманит.-худож. вузов. СПб., 2000.
45. **Степанова Х.В., Столяров Б.А.,** *Формы пропаганды изобразительного искусства среди студентов вузов*, Л., 1981.
46. **Столяров Б.А.,** Музей в пространстве художественной культуры и образования. Учебное пособие.- СПб., 2007.
47. **Столяров Б.А.,** *Художественный музей и эстетическое воспитание молодежи.*, Л., 1987.
48. **Сычева Л.А.,** *Воскресные встречи для родителей с детьми* //Музей, школа, семья: Проблемы музейной педагогики /Гос. музей истории С.-Петербурга. СПб., 1996. Вып. 1.
49. **Турицына Т., Зайцева М.,** *Познавать, играя* //Сов. музей. 1987. № 2.
50. **Хадсон К.,** *Музеи не стоят на месте* // Museum. 1998. стр. 197.
51. **Юренева Т.Ю.,** *Музееведение:* Учебник для высшей школы. М.: Академический Проект, 2003, 560 стр.
52. **Юхневич М.Ю.,** *Детский музей: прошлое и настоящее* //Ориентиры культурной политики: Информ. вып. № 4 /М.-во культуры РФ. Рос. инс-т переподгот. работников искусства, культуры и туризма. Гл. ИВЦ. М., 1997.

AAM Standing Professional Committee on Education EDCOM www.edcom.org

Ալվարդ Գրիգորյան Աստղիկ Մարաբյան

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

ուսումնամեթոդական ձեռնարկ

Շապիկի վրա՝ «Քաղաք Հունդերթվասեր» կրթական ծրագիր,
Գաֆէսճեան արվեստի կենտրոն

Դարձերեսին՝ «Ճանապհիր Երևանր» խաղ շրջայց,
Երևան քաղաքի պատմության թանգարան

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ (374 10) 520 848
www editprint am
info@editprint am

EDIT PRINT
12 Toumanyan str , Yerevan
Tel (374 10) 520 848
www editprint am
info@editprint am